# ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԵՒ

# ՕՐԻՆԱԿՆԵՐ

## ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

## ՄԱՍՆ II.

Յարմարեցրած ծխական և պետական տարրական դպրոցների բ. տարուայ դասընթացին, նոյնպէս ընտանեկան կրթութեան համար:

Երրորդ տպագրութիւն

Կազմեց
Ա. ՓՈՐՍՈՒՂԵԱՆ.

Աղէքսանդրապոլ.
Տպարան Յակովբ Դաստապեանցի
1912

# Ե Ր Կ Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի.

## I.

## ԳՐԱՒՈՐ ԵՒ ԲԱՆԱՒՈՐ ՀԱՇԻՒ 1—100

1. Հաշուել տասնեակներով 10—100 և ընդհակառակը։ Հաշուել 50—100, 40—80, 30—90, 20—70, և ընդհակառակը։

2. Քանի տասնեակ կայ 20-ի, 50-ի, 30-ի, 70-ի, 40-ի, 90-ի, 80-ի, 60-ի, 100-ի մէջ։

3. Կարդալ հետևեալ թուերը. 50, 20, 70, 30, 80, 60, 40, 100, 90.

4. Գրել հետևեալ թուերը, քսան, քառասուն, վաթսուն, երեսուն, յիսուն, եօթանասուն, իննսուն ութանասուն, հարիւր։

---

## ԽՆԴԻՐՆԵՐ ՏԱՍՆԵԱԿՆԵՐՈՎ.

5. Վարժապետը առաջին դասարանում բաժանեց 2 տասնեակ մատիտ, իսկ երկրորդում՝ 3 տասնեակ։ Ընդամենը քանի մատիտ բաժանեց նա։

6. Գիւղացին մի մարդու ծախեց 4 տասնեակ ձու, իսկ միւսին՝ 3 տասնեակ։ Ո՞րքան ձու ծախեց։

7. Որդին գրքի համար ունէր 10 կոպէկ, հօրից էլ ստացաւ 40 կոպէկ։ Ո՞րքան արժէր գիրքը։

8. Հայրս 50 կոպէկի շաքար առաւ, 20 կոպէկի սուրճ։ Ո՞րքան փող ծախսեց նա։

9. Այգեպանը այգում տնկեց 30 խնձորենի և 40 տանձենի։ Բոլորը քանի ծառ տնկեց։

10. Մի գրուանքայ սուրճն արժէ 80 կոպէկ, իսկ մի գրուանքայ շաքարը՝ 20 կոպէկ։ Որքանով սուրճը թանկ է շաքարից։

11. Ծառային տուին 60 կոպէկ. 30 կոպէկի միս առաւ, մնացած փողով հաց։ Քանի կոպէկի հաց առաւ։

12. Պապը 80 տարեկան է, իսկ հայրը՝ 30 տարով նրանից փոքր է։ Քանի տարեկան է հայրը։

13. Իւղով լիք ամանը քաշում է 60 գրուանքայ իսկ դատարկ ամանը՝ 20 գրուանքայ։ Ո՞րքան է քաշում իւղը։

14. Գիւղացին ունի 100 ոչխար, իսկ կովերը՝ 70-ով քիչ են նրանցից։ Քանի կով ունի նա։

15. Կազմարարին յանձնեցին կազմելու 90 գիրք։ Առաջին օրը կազմեց 40 գիրք։ Էլի քանի գիրք մնաց կազմելու։

16. Հայրս գնեց 70 վարունգ և ուզում է աղել երկու ամանի մէջ։ Մէկ ամանը տանում է 40 հատ։ Ո՞րքան է տանում միւսը։

17. Հայրը ամսական ստանում է 40 րուբլի, իսկ որդին՝ 30 րուբլի։ Ո՞վ շատ է ստանում և ո՞րքան։

18. Հողագործն առաւ երկու եզ, իւրաքանչիւրը՝ 40 րուբլիով։ Ո՞րքան փող վճարեց նա։

19. Աղջիկը յետ էր գցել 3 հատ տաս կոպէկանոց, Ո՞րքան փող ունէր նա։

20. Մի գրուանքայ շաքարն արժէ 20 կոպէկ։ Որքան արժէ 3 գրուանքան։

21. Խանութում չորս կտոր միատեսակ չիթ կար. ամեն-մէկը 20 արշին։ Քանի արշին չիթ կար խանութում։

22. Երկաթուղին մի ժամում գնում է 20 վերստ։ Ո՞րքան կը գնայ 4 ժամում։

23. Խանութում երեք արկղ թէյ կայ, ամեն-մէկում՝ 20 գրուանքայ։ Ո՞րքան թէյ կայ խանութում։

24 Մի դիւժին մատիտն արժէ 30 կոպէկ, որքան արժէ 3 դիւժինը։

25 Մայրը աղջկայ համար գնեց 7 արշին չիթ, արշինը 10 կոպէկով։ Ո՞րքան փող վճարեց նա։

26. Փութն ունի 40 գրուանքայ։ Քանի՞ գրուանքայ է 2 փութը։

27. Երեք վարպետ միասին աշխատեցին 30 րուբլի և հաւասար բաժանեցին իրանց մէջ։ Ո՞րքան փող ստացաւ ամեն մէկը։

28. Ութանասուն փութ նաւթը լցրին 4 հաւասար տակառների մէջ։ Քանի՞ փութ նաւթ լցրին ամեն-մէկի մէջ։

29. Կառքի անիւը 5 րոպէում պտտւում է 100 անգամ։ Քանի՞ անգամ է պտտւում մի րոպէում։

30. Եղբայրն ունի 80 կոպէկ, իսկ քոյրը՝ նրանից 4 անգամ պակաս։ Քանի՞ կոպէկ ունի քոյրը։

31. Գիւղացին մի ձին ծախեց 60 րուբլու, իսկ մի կովը՝ նրանից 2 անգամ պակաս գնով։ Ո՞րքան արժէր կովը։

32. Երեսուն բանւորը իրանց մէջ բաժանեցին 60 րուբլի աշխատանքը։ Ո՞րքան փող ստացաւ ամեն-մէկը։

33 Խանութպանը 80 նարինջը դարսեց 2 կողովի մէջ։ Որքան նարինջ դարսեց ամեն մի կողովում։

34. Ծառային տուին 50 կոպէկ, որ 5 գրուանքայ միս առնի։ Ո՞րքան արժէ մի գրուանքայ միսը։

35. Գիւղացին 90 րուբլի պարտքը տուեց 3 անգամով։ Ո՞րքան էր տալիս ամեն-մի անգամ։

---

## ԲԱՆԱՒՈՐ ԵՒ ԳՐԱՒՈՐ

### ԳՈՒՄԱՐԵԼ.

| 1 | | 2. | | 3. | | 4. | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 10+10= | | 60+10= | | 10+20= | | 70+20= |
| | 20+10= | | 70+10= | | 30+20= | | 80+20= |
| | 30+10= | | 80+10= | | 40+20= | | 60+20= |
| | 40+10= | | 90+10= | | 50+20= | | 10+30= |
| | 50+10= | | 60+10= | | 60+20= | | 20+30= |

| 5. | 6 | 7. | 8. |
|---|---|---|---|
| 30+30= | 40+40= | 20+50= | 50+20= |
| 40+30= | 50+50= | 40+20= | 40+30= |
| 50+30= | 60+40= | 70+30= | 60+40= |
| 60+30= | 60+30= | 50+40= | 80+20= |
| 70+30= | 80+20= | 30+50= | 50+50= |

## ՀԱՆԵԼ

| 1. | 2. | 3. | 4 |
|---|---|---|---|
| 20—10= | 70—10= | 30—20= | 80—20= |
| 30—10= | 80—10= | 40—20= | 80—30= |
| 40—10= | 90—10= | 50—20= | 90—40= |
| 50—10= | 100—10= | 60—20= | 70—50= |
| 60—10= | 80—10= | 70—20= | 80—40= |

| 5. | 6 | 7 | 8. |
|---|---|---|---|
| 70—40= | 30—30= | 60—30= | 80—40= |
| 50—30= | 20—20= | 50—40= | 70—50= |
| 80—50= | 90—50= | 80—50= | 90—30= |
| 60—40= | 70—30= | 40—20= | 50—20= |
| 100—60= | 100—50= | 70—60= | 100—60= |

## ԲԱԶՄԱՊԱՏԿԵԼ

| 1. | 2. | 3 | 4 |
|---|---|---|---|
| 2×10= | 10×2= | 3×10= | 10×3= |
| 2×20= | 20×2= | 3×20= | 20×3= |
| 2×30= | 30×2= | 3×30= | 30×3= |
| 2×40= | 40×2= | 4×10= | 10×4= |
| 2×50= | 50×2= | 4×20= | 20×4= |

| 5. | 6. | 7. | 8. |
|---|---|---|---|
| 20×4= | 2×50= | 2×20= | 4×10= |
| 30×3= | 30×3= | 3×10= | 2×40= |
| 10×5= | 4×10= | 4×20= | 5×10= |
| 20×2= | 50×2= | 3×30= | 3×30= |
| 30×2= | 4×20= | 5×10= | 2×50= |

## ԲԱԺԱՆԵԼ.

| | | | |
|---|---|---|---|
| 1. 20 : 2= | 2. 20 : 10= | 3. 30 : 3= | 4. 30 : 10= |
| 40 : 2= | 40 : 10= | 60 : 3= | 60 : 20= |
| 60 : 2= | 60 : 10= | 90 : 3= | 50 : 10= |
| 80 : 2= | 80 : 10= | 40 : 4= | 40 : 20= |
| 100 : 2= | 100 : 10= | 80 : 4= | 70 : 10= |

| | | | |
|---|---|---|---|
| 5. 30 : 10= | 6 20 : 10= | 7. 60 : 30= | 8. 60 : 3= |
| 60 : 10= | 40 : 20= | 100 : 50= | 80 : 4= |
| 90 : 10= | 60 : 10= | 60 : 20= | 20 : 2= |
| 40 : 10= | 100 : 50= | 90 : 30= | 50 : 5= |
| 80 : 10= | 80 : 20= | 80 : 40= | 60 : 6= |

---

## ԳՈՒՄԱՐԵԼ.

36. Որդին ունէր 20 կոպէկ. հօրից ստացաւ էլի 5 կոպէկ։ Այժմ քանի կոպէկ ունի նա։

37. Դաշտում աշխատում էին 30 մարդ, յետոյ էլի եկան 7 մարդ։ Բոլորը քանի հոգի եղան։

38. Առաջին դասարանում կային 40 աշակերտ. կըրկին ընդունուեցան 8 աշակերտ։ Այժմ քանի աշակերտ կայ այդ դասարանում։

39. Տան շինութեան համար գնեցին 60 գերան, յետոյ էլի 3-ը։ Ընդամենը քանի գերան բանեցրին։

40 Գիւղացին գնաց 50 վերստ ճանապարհ, էլի նրան մնաց գնալու վերստ։ Քա՞նի վերստ էր գիւղից քաղաք։

41. Պարտիզպանը մի մարկից պոկեց 40 գլուխ կաղամբ, միւսից՝ 13-ով աւելի։ Ո՞րքան կաղամբ պոկեց երկրորդ մարկից։

42. Խանութպանը մի մարդու ծախեց 50 խնձոր,

միւսին՝ 16 հատ աւելի։ Քա՞նի խնձոր ծախեց երկրորդ մարդուն։

43. Փողոցի մի կողմում շինած են 40 տուն, իսկ միւս կողմում՝ 37 տուն։ Քա՞նի տուն կայ այդ փողոցում։

44. Այգեպանը մի խնձորենուց պոկեց 45 խնձոր, միւսից՝ 30 խնձոր։ Ընդամենը քա՞նի խնձոր պոկեց նա։

45. Գիւղացին քաղաք տարաւ ծախելու մի սայլով 30 խուրձ խոտ, իսկ միւսով՝ 25 խուրձ։ Քա՞նի խուրձ խոտ տարաւ ծախելու։

46. Վաճառականը իւր ունեցած մահուդը ծախեց 75 րուբլու և վնաս արաւ 20 րուբլի։ Քանիսո՞վ էր առել այդ մահուդը։

47. Հայրս երկու հատ կով գնեց. մէկին վճարեց 30 րուբլի, իսկ միւսին 33 րուբլի։ Որքան փող ծախսեց նա։

48. Երկաթուղու գնացքը առաջին ժամում անցաւ 40 վերստ, երկրորդ ժամում 45 վերստ։ Քանի վերստ ճանապարհ անցաւ նա։

49. Գիւղացին առաջին տարուանից ամբարում ունէր 25 փութ գարի, նրա մէջ լցրեց էլի 60 փութ։ Այժմ քանի փութ գարի կայ այնտեղ։

50. Ես աղքատներին բաժանեցի 32 կոպէկ. ինձ մօտ մնաց էլի 6 կոպէկ։ Քա՞նի կոպէկ ունէի ես։

51. Մի կտոր քաթանից կտրեցին 44 արշին, էլի մնաց 4 արշին։ Քա՞նի արշին էր այդ քաթանը։

52. Գիւղացին քաղաքում ապրելու ծախս ունեցաւ 73 կոպէկ, նրա մօտ էլի մնաց 15 կոպէկ։ Քանի կոպէկ ունէր նա քաղաք գալիս։

53. Դպրոցում սովորում են 53 տղայ և 34 աղջիկ։ Քա՞նի սովորող ունի այդ դպրոցը։

54. Վաճառականը մի գիւժին աթոռը առնում է 64 րուբլու և օգուտ է անում 12 րուբլի։ Քանիսով է ծախում մի գիւժին աթոռը։

55. Մանրավաճառը իւր ունեցած լիմոնները ծախեց

85 կոպէկի և վնաս արաւ 15 կոպէկ։ Ինքը քանիսով էր գնել այդ լիմոնները։

56 Գիւղացին մի կովին վճարեց 32 րուբլի, իսկ մի ձիուն՝ 46 րուբլի։ Ո՞րքան փող ծախսեց նա։

57. Հնձի ժամանակ երկու գիւղացի ցորեն էին հընձում։ Մէկը հնձեց 42 խուրձ, իսկ միւսը՝ 34 խուրձ։ Քանի խուրձ ցորեն հնձեցին երկուսը միասին:

58 Խանութպանը գնեց 76 րուբլու ապրանք և օգուտ արաւ 12 րուբլի։ Քանի րուբլու ծախեց բոլոր ապրանքը։

59. Այգու մէջ տնկած են 20 խնձորենի, 27 տանձենի և 30 շլորենի: Քանի պտղատու ծառ կայ այգում։

60. Գրախանութում վաճառեցին 31 հատ այբբենարան, 27 հատ խնդրագիրք և 15 հատ մայրենի լեզու։ Ընդամենը քանի գիրք վաճառեցին։

61. Բանւորների մի խումբը 57 հոգի էր, իսկ միւսը՝ 39 հոգի։ Քանի հոգի կար երկու խմբի մէջ։

62. Ճանապարհորդը մի օրում անցաւ 38 վերստ, իսկ միւս օրը՝ 43 վերստ։ Քանի վերստ անցաւ երկու օրում։

63. Մսավաճառը 12 եզ գնեց, 27 ոչխար և նոյնքան էլ կով։ Որքան անասուն գնեց նա։

64. Գիւղացին մի մարգագետնից հնձեց 25 սայլ խոտ, իսկ միւսից՝ 16 սայլ։ Քանի սայլ խոտ հնձեց նա։

65. Հայրը որդուն տուեց գրքի համար 35 կոպէկ, տետրակի համար 18 կոպ.։ Քանի կոպէկ ստացաւ որդին հօրից։

66 Աշակերտը խանութում երկու գիրք գնեց մեկին տուեց 28 կոպէկ, իսկ միւսին՝ 64 կոպէկ։ Որքան փող ծախսեց նա։

## *ԲԱՆԱՒՈՐ ԵՒ ԳՐԱՒՈՐ.*

| 1 | | 2. | | 3. | | 4 | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 10+6= | | 2+20= | | 17+30= | | 20+12= |
| | 20+4= | | 6+10= | | 25+20= | | 50+13= |
| | 40+7= | | 8+30= | | 11+50= | | 60+17= |
| | 30+8= | | 7+40= | | 42+40= | | 40+11= |
| | 20+5= | | 4+30= | | 39+30= | | 80+15= |
| | 50+3= | | 5+50= | | 46+50= | | 50+12= |
| | 70+9= | | 3+60= | | 24+70= | | 70+14= |
| | 90+2= | | 8+40= | | 18+80= | | 60+13= |
| | 80+9= | | 9+70= | | 55+40= | | 30+18= |

| 5. | | 6 | | 7 | | 8. | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 24+2= | | 14+12= | | 52+35= | | 15+17= |
| | 16+3= | | 22+16= | | 62+17= | | 13+28= |
| | 32+6= | | 41+13= | | 36+22= | | 37+18= |
| | 23+4= | | 54+14= | | 64+14= | | 75+16= |
| | 44+5= | | 61+22= | | 27+21= | | 25+19= |
| | 67+2= | | 85+12= | | 71+15= | | 18+29= |
| | 81+6= | | 72+11= | | 33+24= | | 28+38= |
| | 42+6= | | 46+14= | | 42+26= | | 37+47= |

| 9. | | 10. | | 11 | | 12. | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 15+16= | | 16+48= | | 38+43= | | 68+23= |
| | 17+18= | | 27+29= | | 47+35= | | 15+49= |
| | 16+26= | | 64+37= | | 46+49= | | 18+57= |
| | 18+28= | | 55+28= | | 46+54= | | 16+48= |
| | 19+37= | | 38+48= | | 58+15= | | 24+67= |
| | 26+29= | | 76+18= | | 53+28= | | 77+16= |
| | 28+48= | | 43+37= | | 54+39= | | 22+49= |
| | 35+37= | | 36+24= | | 66+25= | | 78+15= |

## ՀԱՆԵԼ.

67 Եղբայրը 20 տարեկան է, իսկ քոյրը նրանից 5 տարով փոքր է։ Քանի տարեկան է քոյրը։

68. Գիւղացին 40 գրուանքայ իւղ ունէր. այդ իւղից մի գնողի ծախեց 8 գրուանքայ։ Քանի գրուանքայ իւղ մնաց ծախելու։

69. Հայրս գնեց 30 ձմերուկ. նրանցից 6 հատը վատ դուրս եկան։ Քանի ձմերուկ լաւ էր։

70. Այգում տնկած էին 60 ծառ. նրանցից 9 հատը չորացան։ Քանի ծառ մնաց այգում։

71 Մի գիրքն արժէ 80 կոպէկ, իսկ միւսը՝ նրանից 5 կոպէկ պակաս։ Ո՞րքան արժէ երկրորդ գիրքը։

72. Մահուդի երկարութիւնն էր 36 արշին. նրանից 6 արշին ծախեցին։ Քանի արշին մահուդ մնաց։

73. Հայրը 47 տարեկան է, մայրը նրանից 7 տարով փոքր է։ Քանի տարեկան է մայրը։

74. Դասարանում 55 աշակերտ կար. նրանցից 5 հոգի չէին եկել դասի։ Քանի հոգի եկել էր դպրոց։

75. Գիւղացին 86 ոչխար ունէր. նրանցից 6 հատը սատկեցին։ Ո՞րքանը մնաց։

76. Պարտիզպանը պարտիզում պոկեց 25 ձմերուկ. 8 հատը ծախեց։ Որքան ձմերուկ մնաց։

77. Գիւղից քաղաք 48 վերստ է։ Գիւղացին մի ժամում անցաւ 9 վերստ։ Էլի քանի վերստ մնաց գնալու։

78 Եղբայրը հաւաքել էր 32 կոպէկ, իսկ քոյրը նրանից 7 կոպէկ պակաս։ Քանի կոպէկ ունէր քոյրը։

79. Պահարանում 75 կտոր գիրք կար. նրանցից 9 հատը առանց կազմի էին։ Քանիսն էին կազմած։

80. Գիւղացին 42 ոչխար ունէր, իսկ նրա դրացին 6-ով պակաս։ Քանի ոչխար ունէր դրացին։

81. Խանութպանը 84 րուբլու բուրդ գնեց. նոյն բուրդը ծախեց 96 րուբլու։ Որքան օգուտ արաւ։

82. Խանութպանը երկու տեսակ ալիւր խառնեց իրար՝ բոլորը 78 գրուանքայ։ Մի տեսակը 52 գրուանքայ էր։ Ո՞րքան էր միւս տեսակը։

83. Բանւորը օրական ստանում է 85 կոպէկ, 15 կոպէկը նա յետ է գցում, քանի կոպէկ ծախսում է օրական։

84. Գիւղացին մի եզը գնեց 43 րուբլու և ծախեց 55 րուբ։ Ո՞րքան օգուտ արաւ։

85. Աշակերտը 78 կոպէկ ունէր․ գրքի և տետրակի համար նա ծախսեց 62 կոպէկ։ Ո՞րքան փող աւելացաւ նրա մօտ։

86. Գիւղացին 96 խուրձ գարի պիտի կալսէր. նա կալսեց միայն 65 խուրձ։ Էլի քանի խուրձ մնաց կալսելու։

87. Երեխան որսաց 42 ձուկ. նրանցից 27 հատը տուեց մօրաքրոջը. մնացածը տարաւ տուն։ Քանի ձուկ տարաւ տուն։

88 Մի տուն 55 լուսամուտ ունի․ նրանցից 38 հատը նայում են դէպի փողոց, իսկ միւսները դէպի բակը։ Քանիսն են նայում դէպի բակը։

89. Գիրքը ունի 76 երես. աշակերտը կարդաց 28 երես։ Էլի քանի երես մնում է կարդալու։

90. Հայրս ամսական ստանում է 83 րուբլի և ծախսում է 68 րուբլի։ Քանի րուբլի կարողանում է խնայել։

91. Նաւահանգստում կանգնած էին 84 նաւ. նրանցից 59 ծովը դուրս եկան։ Քանի նաւ մնաց նաւահանգստում։

92. Մի գիւղացի 42 ոչխար ունի, իսկ նրա դրացին՝ 17-ով պակաս։ Քանի ոչխար ունի դրացին։

93. Մայրը երկու աղջկայ համար 27 արշին չիթ առաւ։ Մեծի համար բանեցրին 16 արշին։ Որքան բանեցրեց փոքրի համար։

---

## ԲԱՆԱՒՈՐ ԵՒ ԳՐԱՒՈՐ.

| 1 | | 2 | | 3 | | 4. | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 10—4= | | 80—7= | | 17—7= | | 35—5= |
| | 20—6= | | 70—8= | | 25—5= | | 63—3= |
| | 30—3= | | 50—2= | | 38—8= | | 27—7= |
| | 40—7= | | 30—9= | | 49—9= | | 45—5= |
| | 50—5= | | 60—8= | | 56—6= | | 87—7= |
| | 60—9= | | 40—1= | | 74—4= | | 48—8= |
| | 20—8= | | 90—6= | | 91—1= | | 33—3= |
| | 40—4= | | 70—5= | | 84—4= | | 99—9= |

| 5. | | 6. | | 7. | | 8. | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 12—4= | | 16—4= | | 56—2= | | 88—9= |
| | 23—5= | | 18—6= | | 17—5= | | 91—5= |
| | 27—9= | | 37—5= | | 48—3= | | 66—8= |
| | 33—6= | | 28—3= | | 39—7= | | 48—9= |
| | 42—5= | | 46—5= | | 68—5= | | 74—6= |
| | 51—6= | | 57—4= | | 26—3= | | 55—7= |
| | 63—6= | | 39—8= | | 28—6= | | 63—8= |
| | 72—7= | | 78—5= | | 85—4= | | 82—9= |

| 9. | | 10. | | 11. | | 12 | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 56—20= | | 37—22= | | 34—16= | | 54—19= |
| | 64—30= | | 46—24= | | 84—47= | | 63—28= |
| | 75—50= | | 49—17= | | 27—19= | | 74—37= |
| | 87—70= | | 58—35= | | 58—39= | | 81—42= |
| | 93—10= | | 65—24= | | 44—28= | | 94—56= |
| | 48=20= | | 29—13= | | 93—47= | | 61—13= |
| | 88—30= | | 37—25= | | 91—36= | | 76—27= |
| | 92—50= | | 68—44= | | 86—27= | | 54—28= |

## ԳՈՒՄԱՐԵԼ ԵՒ ՀԱՆԵԼ.

94. Մարդը ունի 32 ատամ։ Նրանցից 8 հատը կտրիչներ են. 4 հատը ժանիքներ, մնացածը՝ սեղանատամներ։ Քանի սեղանատամ ունի մարդը։

95. Խանութում երկու կտոր չիթ կար։ Մէկը՝ 43 արշին, միւսը՝ 55 արշին։ Այդ չթից ծախեցին 64 արշին։ Քանի արշին չիթ մնաց խանութում։

96 Երեք սայլի վրայ բարձել են 92 փութ ալիւր։ Մէկ սայլի վրայ բարձած է 32 փութ, միւսի՝ 27 փութ Ո՞րքան է բարձած երրորդ սայլի վրայ։

97 Մշակն ամառը աշխատում է 78 րուբլի, իսկ ձմեռը՝ 32 րուբլի պակաս։ Ո՞րքան է աշխատում ամառ և ձմեռ միասին։

98. Խանութպանը 72 նարինջ ունէր։ Մի գնողի ծախեց 33 հատ, միւսին՝ 18 հատ պակաս։ Որքան նարինջ մնաց նրա մօտ։

99. Մի կտոր մահուդը 47 արշին էր։ Մի մարդ գնեց այդ մահուդից 18 արշին, իսկ միւսը՝ 12 արշին։ Քանի արշին մահուդ մնաց։

100. Այգում տնկած էր 56 խնձորենի և 38 տանձենի։ Ցրտի պատճառով փչացաւ 12 խնձորենի և 8 տանձենի։ Որքան ծառ մնաց այգում։

101. Գիւղացին ծախեց 27 րուբլու խոտ և 48 րուբլու ցորեն։ Այդ փողերով նա գնեց մի ձի՝ 43 րուբլու և մի կով։ Ո՞րքան արժէր կովը։

102. Տանտիկինը մէկ թուխսի տակ դրեց 15 ձու, իսկ միւսի՝ 12 ձու։ Այդ բոլորից դուրս եկաւ միայն 22 ձագ։ Քանի ձու փչացաւ։

103. Մի գիւղում կայ 92 հոգի. նրանցից 35-ը տղամարդ են, այդքան էլ կին, իսկ մնացածը երեխաներ են։ Որքան երեխայ կայ այդ գիւղում։

104. Ջրաղաց բերին 85 տոպրակ ցորեն երեք սայ-

լով։ Մէկի վրայ բարձած էր 32 տոպրակ, միւսի վրայ՝ 8-ով պակաս։ Որքան էր բարձած երրորդ սայլի վրայ։

**105.** Խանութում կար մի փութ բրինձ։ Մի գնողի ծախեցին 16 գրուանքայ, միւսին՝ 18 գրուանքայ։ Որքան բրինձ մնաց խանութում։

**106.** Աշակերտը գնեց մի գիրք 35 կոպէկի և տետրակներ՝ 28 կոպէկի։ Նա տուեց մի րուբլի։ Որքան փող պիտի յետ ստանայ։

---

## *ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ.*

**107.** Մի գրքի մէջ կայ 25 երես, միւսի մէջ՝ նոյնպէս 25 երես։ Ո՞ր գրքի մէջ երեսները շատ են։

**108.** Գիւղացին ունի 40 ոչխար, նրա դրացին նոյնպէս 40 ոչխար։ Ո՞վ ոչխար շատ ունի և ո՞րքան։

**109.** Մի դասարանում կայ 45 աշակերտ, միւսում՝ 35 աշակերտ։ Ո՞ր դասարանում աշակերտները շատ են և քանիսով։

**110.** Մանրավաճառը մի կողովի մէջ ունէր 60 նարինջ, միւսի մէջ 54 նարինջ։ Որ կողովի մէջ նարինջները շատ են և ո՞րքանով։

**111.** Մի ձին արժէ 70 րուբլի, իսկ մի կովը՝ 30 րուբլի։ Ո՞րքանով ձին թանկ է կովից։

**112.** Մի գրուանքայ շաքարն արժէ 20 կոպէկ, իսկ մի գրուանքայ սուրճը՝ 60 կոպէկ։ Քա՞նի կոպէկով շաքարը աժան է սուրճից։

**113.** Հայրս 35 տարեկան է, իսկ հօրեղբայրս՝ 45 տարեկան։ Քա՞նի տարով հայրս փոքր է նրանից։

**114.** Մի կտոր մահուդի երկարութիւնն է 54 արշին, իսկ միւսինը՝ 36 արշին. Քա՞նի արշինով առաջին կտորը երկար է երկրորդից։

**115.** Մի տան բարձրութիւնն է 27 սաժէն, իսկ միւ-

սինը՝ 22 սաժեն։ Քանի սաժենով երկրորդը ցածր է առաջինից։

**116.** Մի փողոցի երկարութիւնն է 60 սաժեն, իսկ միւսինը՝ 48 սաժեն։ Քանի սաժեն առաջինը երկար է երկրորդից։

**117** ա. Որ թիւը 25-ից շատ է 10, 14, 22, 31-ով։

բ. Որ թիւը 54-ից փոքր է 16, 18, 24-ով։

գ. Որ թիւը մեծ է 36-ից 12, 26, 34, 42-ով։

դ. Որքան պէտք աւելացնենք 35-ին, որ ստանանք 80։

ե. Որքան պէտք աւելացնենք 27-ին, որ ստանանք 54, 63, 71։

զ. Որքան պէտք աւելացնենք 34-ին, որ ստանանք 70, 48, 56, 68։

է. Որ թիւը փոքր է 64-ից 22, 36, 25, 18, 43-ով։

ը. Որքան պէտք հանենք 82-ից, որ ստանանք 24, 18, 42, 56։

---

## ԲԱՆԱՒՈՐ ԵՒ ԳՐԱՒՈՐ.

| | | |
|---|---|---|
| **1.** 18+8—8= | **2.** 71—8+9= | **3.** 14+16—18= |
| 23+8—4= | 84—5+7= | 13+27—15= |
| 36+5+9= | 48—9+6= | 38+14—35= |
| 48+4—5= | 72—8+9= | 47+35—26= |
| 57+6—7= | 35+7—8= | 84—46+23= |
| 63—9+6= | 55+6—7= | 92—33+19= |

| | | | |
|---|---|---|---|
| 4. | 25+67−24= | 5 | 64+18−37−16= |
| | 42−19+46= | | 47+25−58+29= |
| | 36−18+25= | | 53−34+64−57= |
| | 54−18+30= | | 100−34+25−17= |
| | 65+15−42= | | 18+57+15−63= |
| | 45+17−32= | | 35−19+57−39= |

| | | | |
|---|---|---|---|
| 6. | 60+25−48−26= | 7 | 50+32−60+15= |
| | 100−64−19+48= | | 85−24−21+38= |
| | 65−18−12+25= | | 57+13−15−24= |
| | 48+15−33+24= | | 42+28−16−23= |
| | 67−23−45+15= | | 45+55−70+58= |
| | 36+24−27−13= | | 56−24+68−35= |

25221

---

**118.** *Շաբաթն ունի 7 օր։ Քանի՞ օր կունենայ 3, 4, 5 շաբաթը։*

**119.** *Դպրոցում շաբաթական պարապում են 6 օր։ Քանի՞ օր կը պարապեն 4 շաբաթում։*

**120.** *Մի գրուանքայ միսն արժէ 8 կոպէկ։ Ո՞րքան արժէ 3, 4, 5 գրուանքան։*

**121.** *Խանութպանը ծախեց 8 արշին մահուդ, արշինը՝ 4 րուբլով։ Ո՞րքան փող ստացաւ նա։*

**122.** *Մի շաբաթում մենք բանեցնում ենք 7 գրուանքայ շաքար։ Որքան շաքար կը բանեցնենք 5, 6 շաբաթում։*

**123.** *Պղնձագործը մի կաթսայի համար բանեցրեց 6 գրուանքայ պղինձ։ Ո՞րքան պղինձ կը բանեցնէ 6 կաթսայի համար։*

**124.** *Ծառան ամսական ստանում է 7 րուբլի։ Որքան կ'ստանայ 8 ամսում։*

**143.** Գիւղացին ցանեց 14 փութ գարի և բերքն ստացաւ մէկին-վեց։ Ո՞րքան գարի ժողովեց նա։

**144.** Մանրավաճառը ծախեց 18 նարինջ, որի հատն արժէր 5 կոպէկ։ Որքան փող ստացաւ նա։

**145.** Հայրս գնեց 2 գլուխ շաքար, որոնց ամեն-մի հատը քաշում էր 28 գրուանքայ։ Որքան շաքար առաւ նա։

**146.** Բանւորը ամսական ստանում է 15 րուբլի։ Որքան կստանայ 3, 4, 5 ամսում։

**147.** Մի գրուանքայ շաքարն արժէ 17 կոպէկ։ Ո՞րքան արժէ 5 գրուանքան։

**148.** Որդին 3 տարեկան է, իսկ հայրը նրանից մեծ է 12 անգամ։ Քա՞նի տարեկան է հայրը։

**149.** Մի գրուանքայ հացն արժէ 4 կոպէկ։ Որքան արժէ 14, 17, 21, 25 գրուանքան։

**150.** Մրգավաճառը գնեց 16 արկղ խնձոր, ամեն-մէկի մէջ 4 փութ։ Քա՞նի փութ խնձոր գնեց նա։

**151.** Գիւղացին մի արտից ստացաւ 27 փութ ցորեն, միւսից՝ 3 անգամ աւելի։ Ո՞րքան ցորեն ստացաւ երկրորդ արտից։

**152.** Մի արշին չիթն արժէ 12 կոպէկ, իսկ մի արշին քաթանը՝ 2 անգամ աւելի։ Ո՞րքան արժէ 1, 3, 4 արշին քաթանը։

**153.** Վաճառականը 4 արկղ թէյ ստացաւ. առաջին երկուսի մէջ կար 27-ական գրուանքայ, միւս երկուսի մէջ՝ 18-ական գրուանքայ։ Ո՞րքան թէյ ստացաւ նա։

**154.** Երկու վաճառական իրար հետ ապրանք փոխանակեցին։ Մէկը տուեց երկու գրուանքայ սուրճ, որի գրուանքան արժէր 48 կոպէկ իսկ միւսը տուեց 4 կապ թել որի կապն արժէր 25 կոպէկ։ Ո՞րի տուած ապրանքը թանկ արժէր և ո՞րքան։

**155.** Գիւղացին մի զոյգ եզ գնեց, ամեն-մէկը 37 րուբլու։ Նա տուեց մի հատ հարիւր րուբլիանոց։ Ո՞րքան փող պէտք է յետ ստանայ։

**156.** Ճանապարհորդն առաջին օրն անցաւ 39 վերստ, երկրորդ օրը 2 անգամ աւելի։ Քանի՞ վերստ գնաց երկրորդ օրը։

**157.** Հայրս աշնանը այգում ժողովեց 11 փոթ խընձոր, 2 անգամ աւելի դեղձ և երեք անգամ աւելի տանձ։ Որքան պտուղ ժողովեց նա։

**158.** Մի տուն 4 սենեակ ունի. ամեն-մի սենեակը՝ 3 լուսամուտ, ամեն-մի լուսամուտը՝ 8 ապակի։ Քանի՞ ապակի ունի այդ տունը։

**159.** Մի գրուանքայ պանիրն արժէ 20 կոպէկ, իսկ մի գրուանքայ սուրճը՝ 3 անգամ աւելի։ Ո՞րքան փող պիտի յետ ստանամ մի րուբլուց, եթէ ամեն-մէկից գնել եմ մի-մի գրուանքայ։

---

## *ԲԱՆԱՒՈՐ ԵՒ ԳՐԱՒՈՐ.*

| 1. | 2. | 3 | 4 | 5. |
|---|---|---|---|---|
| 13×6= | 16×4= | 15×4= | 4×12= | 5×16= |
| 12×2= | 13×7= | 12×7= | 6×15= | 4×13= |
| 18×5= | 17×4= | 14×5= | 3×25= | 6×12= |
| 25×2= | 28×3= | 35×2= | 8×11= | 3×29= |
| 18×3= | 19×5= | 26×3= | 4×23= | 5×19= |
| 24×4= | 14×7= | 18×4= | 5×14= | 4×25= |
| 16×6= | 23×4= | 48×2= | 2×28= | 2×46= |
| 23×3= | 13×7= | 25×4= | 8×12= | 7×12= |
| 17×5= | 32×3= | 29×3= | 7×14= | 3×32= |

| 6. | 7. | 8 | 9. | 10. |
|---|---|---|---|---|
| 15×5= | 12×5= | 24×4= | 17×3= | 12×3= |
| 14×3= | 13×6= | 18×4= | 16×4= | 22×3= |
| 27×3= | 18×4= | 32×3= | 21×4= | 33×3= |
| 16×4= | 13×3= | 23×3= | 17×5= | 21×4= |
| 21×4= | 15×6= | 21×3= | 18×3= | 12×5= |
| 18×3= | 14×7= | 19×3= | 21×3= | 11×7= |
| 14×5= | 21×4= | 31×2= | 25×3= | 12×7= |
| 19×2= | 19×4= | 24×3= | 27×3= | 11×9= |
| 18×5= | 22×2= | 18×4= | 19×5= | 26×3= |

---

| | | | |
|---|---|---|---|
| **9.** 42 : 3= | **10.** 36 : 12= | **11.** 40 : 20= | **12.** 84 : 7= |
| 45 : 3= | 72 : 24= | 90 : 30= | 96 : 8= |
| 48 : 3= | 63 : 21= | 60 : 10= | 51 : 3= |
| 52 : 4= | 48 : 16= | 80 : 20= | 54 : 3= |
| 64 : 4= | 56 : 14= | 66 : 22= | 57 : 3= |
| 60 : 5= | 75 : 25= | 77 : 11= | 60 : 4= |
| 65 : 5= | 39 : 13= | 88 : 44= | 68 : 4= |
| 72 : 6= | 88 : 22= | 99 : 33= | 70 : 5= |
| 78 : 6= | 68 : 17= | 55 : 11= | 75 : 5= |

---

## *ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ.*

**179.** *Մի գրուանքայ շաքարն արժէ 15 կոպէկ։ Քանի գրուանքայ շաքար կարելի է գնել 45 կոպէկի։*

**180.** *Հինգ գրուանքայ պանիրն արժէ 75 կոպէկ։ Քանի գրուանքայ պանիր կարելի է առնել 90 կոպէկի։*

**181.** *Երեք գրուանքայ ընկուզը արժէ 78 կոպէկ։ Ո՞րքան ընկուզ կարելի է գնել 52 կոպէկով։*

**182.** *Ծառան տարեկան ստանում է 84 րուբլի։ Քանի ամսում նա կստանայ 56 րուբլին։*

**183.** *Հայրս գնեց 35 գրուանքայ միս և 40 գրուանքայ գետնախնձոր։ Քանի օր կը բաւականանայ այդքան պաշարը, եթէ օրական բանեցնում ենք 7 գրուանքայ միս և 8 գրուանքայ գետնախնձոր։*

**184.** *Գիւղից մինչև քաղաք 56 վերստ է։ Գիւղացին քանի ժամում անցաւ այդ տարածութիւնը, եթէ մի ժամում գնում էր 4 վերստ։*

**185.** *Մի դիւժին գրչածայրն արժէ 10 կոպէկ։ Քանի դիւժին գրչածայր էին առել, եթէ որ խանութպանին վճարեցին 75 կոպէկ։*

**186.** *Հայրը 48 կոպէկով գնեց 12 գրուանքայ խնձոր,*

իսկ մայրը՝ 72 կոպէկի խաղող։ Քանի գրուանքայ խաղող գնեց նա, եթէ խաղողը երկու անգամ թանկ էր խնձորից։

**187.** Դերձակը 4 արշին մահուդից պատրաստում է 5 միատեսակ բաճկոն։ Քանի արշին մահուդ պիտի ունենայ, որ պատրաստէ 35 նոյնպիսի բաճկոն։

**188.** Գրքի 4 երեսը արտագրելիս տեղաւորում է տետրակի 9 երեսի վրայ։ Քանի թերթից տետրակ պէտք է լինի գրքի 28 երեսը արտագրելու համար։

**189.** Մսագործը 92 րուբլու գնեց հաւասար թւով կովեր և ոչխարներ։ Մի կովն արժէր 20 րուբլի, իսկ մի ոչխարը՝ 3 րուբլի։ Քանի կով և քանի ոչխար գնեց նա։

**190.** Երկու խանութպան ապրանք են փոխանակում. մէկը տուեց 84 րուբլու թէյ, որի գրուանքան արժէր 2 րուբլի, իսկ միւսը տուեց շաքար, որի փութն արժէր 6 րուբլի։ Քանի փութ շաքար տուեց նա։

**191.** Մանրավաճառը 8 նարինջը, որոնց հատն արժէր 7 կոպէկ, փոխանակեց 14 լիմոնի հետ։ Ո՞րքան արժէր ամեն-մի լիմոնը։

**192.** Նաւակը մի ժամում անցնելով 6 վերստ, մի քաղաքից միւսը հասաւ 15 ժամում։ Շոգենաւը նոյն տարածութիւնը անցաւ 5 ժամում։ Քանի վերստ էր անցնում նա ամեն-մի ժամում։

**193.** Շոգենաւը 8 ժամում անցնում է 96 վերստ. իւրաքանչիւր ժամում քանի վերստ աւելի պիտի գնայ, որ նոյն տարածութիւնը անցնի 6 ժամում։

---

## *ՄԱՍԵՐ.*

**194.** Խանութում 32 արշին չիթ կար։ Մի մարդու ծախեցին նրա կէսը, միւսին՝ մնացածի չորրորդ մասը։ Քանի արշին չիթ մնաց խանութում։

**195.** Աւազանի մէջ 75 վեդրօ ջուր կար՝ նրա երրորդ

221. [illegible] 4-ին։ [illegible]

222. Գտնել այն թիվը, որի երկու հինգերորդ մասը հավասար է 8, 12, 14, 24, 32, 38-ին։

223. [illegible] 4, 7, 9, 12, 15։

224. Գտնել այն թիվը, որի վեցերորդ մասը հավասար է 6, 12, 8, 9-ին։

225. Գտնել այն թիվը, որի հինգ վեցերորդ մասը հավասար է 15, 35, 60, 20, 30-ին։

226. Գտնել այն թիվը, որի ութերորդ մասը հավասար է 11, 4, 10, 7, 6, 12, 9-ին։

227. Գտնել այն թիվը, որի երեք [illegible] մասը հավասար է 24, 33, 21, 15, 18-ին։

228. Գտնել այն թիվը, որի [illegible] մասը հավասար է 4, 6 8, 7, 10, 9, 5-ին։

229. Գտնել այն թիվը, որի երկու [illegible] մասը հավասար է 6, 8, 10, 12, 14-ին։

## [illegible]

230. [illegible] 12 [illegible] 21 [illegible]

231. [illegible] 16 [illegible] 8 [illegible]

232. [illegible] 4 [illegible] 5 [illegible] 36 [illegible]

233. [illegible] 3 [illegible]

221. Ես մտքումս մի թիւ եմ պահել նրա հինգերորդ մասը հաւասար է 4-ին։ Ո՞րն է մտքումս պահած թիւը։

222. Գտնել այն թիւը, որի երկու հինգերորդ մասը հաւասար է 8, 12, 14, 24, 32, 38-ին։

223 Ո՞ր թիւը պէտք է բաժանել 6-ի վրայ, որ ստանանք 4, 7, 9, 12, 15։

224. Գտնել այն թիւը, որի վեցերորդ մասը հաւասար է 6, 12, 8, 9-ին։

225. Գտնել այն թիւը, որի հինգ վեցերորդ մասը հաւասար է 15, 35, 60, 20, 30-ին։

226. Գտնել այն թիւը, որի ութերորդ մասը հաւասար է 11, 4, 10, 7, 6, 12, 9-ին։

227. Գտնել այն թիւը, որի երեք ութերորդ մասը հաւասար է 24, 33, 21, 15, 18-ին։

228. Գտնել այն թիւը, որի իններորդ մասը հաւասար է 4, 6 8, 7, 10, 9, 5-ին։

229 Գտնել այն թիւը, որի երկու իններորդ մասը հաւասար է 6, 8, 10, 12, 14-ին։

## ԲԱԶՄԱՊԱՏԿԵԼ ԵՒ ԲԱԺԱՆԵԼ

230. Մի ոչխարն արժէ 4 րուբլի, մի ձին 21 անգամ թանկ արժէ, իսկ մի կովը՝ 3 անգամ ձիուց պակաս արժէ։ Ի՞նչ արժէ կովը։

231. Գիւղացին 16 փութ ցորեն ունէր, իսկ 6 անգամ աւելի՝ գարի։ Գարու չորրորդ մասը ծախեց։ Ո՞րքան գարի ծախեց նա։

232. Ո՞րքան արժէ 4 գրուանքայ իւղը, եթէ որ նրա 5 գրուանքան արժէ 95 կոպէկ։

233. Խանութում 3 տակառ գինի կար, ամեն մէ-

կում 32 վեդրո։ Բոլոր գինու ութերորդ մասը ծախեցին։ Ո՞րքան գինի ծախեցին։

**234**. Երկաթուղու գնացքը 3 ժամում անցնում է 72 վերստ, իսկ ոտաւորը նրանից 6 անգամ ծանր է գնում։ Ո՞րքան տարածութիւն է անցնում ոտաւորը 17 ժամում։

**235**. Տասնևեօթ արշին մահուդը արժէ 51 ռուբլի։ Ո՞րքան արժէ 13 արշին մախմուրը, եթէ որ վերջինս երկու անգամ թանկ արժէ մահուդից։

**236**. Մայրը գնեց 8 արշին չիթ, որի արշինն արժէր 12 կոպէկ և կարեց չորս միատեսակ շապիկ։ Ո՞րքան արժէր ամեն-մի շապիկը։

**237**. Դարբինը գնեց 12 գրուանքայ երկաթ, գրուանքան 6 կոպէկի։ Բոլոր երկաթից շինեց 24 պայտ։ Որքան արժէր ամեն-մի պայտը։

**238**. Իննսուն և հինգ գրուանքայ շաքարը հաւասարապէս բաժնեցրին 19 շաբաթում։ Որքան շաքար կը բաժնեցնեն 13 շաբաթում։

**239**. Ուսուցիչը 72 թերթ թուղթը հաւասարապէս բաժանեց 12 աշակերտի։ Որքան թուղթ ստացան 6 աշակերտը, 4 աշակերտը։

**240**. Խանութում կար 6 գլուխ շաքար, ամեն-մի գլուխը՝ 9 գրուանքայ և էլի 3 գլուխ, ամեն մէկը՝ 7 գրուանքայ։ Բոլորը շաքարը ծախեցին 5 մարդու հաւասար կերպով։ Որքան շաքար գնեց ամեն-մէկը։

**241**. Հինգ մատիտը և 6 տետրակը արժէ 68 կոպէկ։ Որքան արժէ մի տետրակը, եթէ մի մատիտը արժէ 4 կոպէկ։

**242**. Երկու բազկաթոռին և 7 աթոռին վճարեցին 93 ռուբլի։ Մի աթոռն արժէր 9 ռուբլի։ Որքան արժէր ամեն-մի բազկաթոռը։

**243**. Գիւղացին ցանեց 12 փութ գարի և բերքը ստացաւ մէկին 7։ Ստացած բերքի չորրորդ մասը ծախեց, վեցերորդ մասը՝ պահեց սերմացուի համար, մնացածը

| | |
|---|---|
| 6. $100 : 25 \times (24 : 12) =$ | 7. $(76 - 55) : 3 =$ |
| $12 \times 6 : (39 : 13) =$ | $(81 - 66) : 3 =$ |
| $75 : 25 \times (12 \times 2) =$ | $(71 - 26) : 5 =$ |
| $16 \times 4 : (4 \times 8) =$ | $(78 - 63) : 5 =$ |
| $96 : 4 \times (72 : 24) =$ | $(51 - 16) : 7 =$ |
| $56 : 14 \times (75 : 3) =$ | $(60 - 32) : 7 =$ |

## ՉՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ.

**246** Աշակերտը 5 մատիտին և 6 տետրակին տուեց 68 կոպէկ։ Մի մատիտն արժէր 4 կոպէկ որքա՞ն արժէր մի տետրակը։

**247.** Վաճառականը ծախեց 4 տոպրակ ալիւր, ամեն-մի տոպրակը 13 ռուբլու և 3 գլուխ շաքար, ամեն-մի գլուխը՝ 8 ռուբլու։ Այդ փողերով գնեց 4 արկղ սուրճ Ո՞րքան արժէր ամեն-մի արկղ սուրճը։

**248.** Քղնձագործը գնեց 2 կտոր պղինձ մէկը 28 գրուանքայ, միւսը՝ 36 գրուանքայ։ Բոլոր պղնձից շինեց 16 միատեսակ կաթսաներ։ Ո՞րքան էր քաշում ամեն-մի կաթսան։

**249.** Երեխան մի քանի ընկուզներ ունէր. 5 ընկերից ամեն-մէկին տուեց 15 ընկուզ, մնացած 12 ընկուզը տուեց քրոջը։ Քա՞նի ընկուզ ունէր նա։

**250.** Խանութպանը ծախեց 7 գրուանքայ մոմ, գրուանքան 8 կոպէկով և 5 գրուանքայ բալ, գրուանքան 6 կոպէկով։ Ո՞րքան փող ստացաւ։

**251.** Գիւղացին քաղաք հասաւ 21 ժամում, ամեն-մի ժամում գնալով 4 վերստ։ Վերադարձին նոյն ճանապարհը անցաւ 12 ժամում։ Քա՞նի վերստ էր գնում նա մի ժամում վերադառնալիս։

**252.** Կալում դարսած էին 36 խուրձ գարի։ Առաջ

կալսեցին նրա կէսը, յետոյ վեցերորդ մասը։ Քա՞նի խուրձ գարի մնաց կալսելու։

**253**. Մանրավաճառը 8 նարինջը փոխեց 14 լիմոնի հետ։ Ո՞րքան արժէր մի լիմոնը, եթէ մի նարինջն արժէր 7 կոպէկ։

**254**. Երկու եղբայր միասին գնեցին 61 շլոր։ Փոքր եղբայրը մեծից 17 շլոր պակաս գնեց։ Քա՞նի շլոր գնեց ամեն-մի եղբայրը։

**255**. Ձկնորսը երկու կողովի մէջ 79 ձուկ ունէր։ Երբ ամեն-մի կողովից հաւասար չափով ծախեց, մէկում մնաց 15 ձուկ, միւսում՝ 26։ Քանի ձուկ կար ամեն-մի կողովում։

**256**. Մի աշակերտ գնեց 18 մատիտ, իսկ միւսը՝ 15 և առաջինը երկրորդից 9 կոպէկ աւելի վճարեց։ Ո՞րքան փող ծախսեց ամեն-մի աշակերտը։

**257**. Խանութպանը մի մարդու ծախեց 9 արշին մահուդ, իսկ միւսին՝ 12 արշին նոյն մահուդից և երկուսից ստացաւ 84 ռուբլի։ Քա՞նի ռուբլի երկրորդը առաջինից աւելի վճարեց։

**258**. Այգեպանը փողոց բերեց երկու կողով խնձոր։ Մէկում կար 46 խնձոր, միւսում՝ 18 խնձոր պակաս։ Քա՞նի խնձոր բերեց նա ընդամենը։

**259**. Պարտիզպանը մի մարգից պոկեց 54 գլուխ կաղամբ, միւսից՝ 16 գլուխ պակաս, իսկ երրորդից այնքան, որքան երկու մարգից միասին։ Քա՞նի գլուխ կաղամբ պոկեց նա երրորդ մարգից։

**260**. Մանրավաճառը 16 արշին ժապաւէնը առնում է 96 կոպէկի, իսկ ինքը 7 արշինը ծախում է 56 կոպէկի։ Ո՞րքան օգուտ կստանայ 38 արշին ժապաւէն ծախելուց։

**261**. Գիւղացին 6 ձուն ծախում է 15 կոպէկի։ Ո՞րքան փող պիտի ստանայ, եթէ ընդամենը ծախեց 30 ձու։

**262**. Եօթը գրուանքայ ալիւրից ստացւում է 9 գըր-

ուանքայ հաց։ Ո՞րքան ալիւր է հարկաւոր, որ ստանանք 6 հաց, ամեն-մէկը 12 գրուանքայ։

**263.** Դերձակը գնեց հաւասար չափով կարմիր և կապոյտ մահուդ։ Մի արշին կապոյտ մահուդը արժէ 3 ռուբլի, իսկ մի արշին կարմիր մահուդը՝ 5 ռուբլի․ Քանի արշին մահուդ գնեց ամեն-մի տեսակից, եթէ բոլորին վճարեց 96 ռուբլի։

**264.** Երկու ընկեր միասին 72 կոպէկի մի դիւժին տետրակ գնեցին, նրանցից մէկը վերցրեց 7 տետրակ, իսկ միւսը՝ մնացածը։ Քա՞նի կոպէկ վճարեց նրանցից ամեն-մէկը։

**265.** Երեք եղբայր իրար մէջ բաժանեցին 75 կոպէկ, այնպէս, որ մեծը ստացաւ 5 կոպէկ աւելի, քան միջնակը և միջնակը 5 կոպէկ աւելի, քան փոքրը․ Քա՞նի կոպէկ ստացաւ ամեն-մի եղբայրը․

**266.** Երկու դասարանում միասին 76 աշակերտ կար։ Երբ մէկից դուրս գնացին 19 հոգի, իսկ միւսից՝ 5 հոգի, երկու դասարանումն էլ մնացին հաւասար։ Քա՞նի աշակերտ կար ամեն-մի դասարանում։

**267.** Խանութպանը մի արշին չիթը առնում է 18 կոպէկի, իսկ ծախում է 21 կոպէկի։ Քա՞նի արշին չիթ պիտի ծախէ, որ օգուտ անէ 81 կոպէկ․

**268.** Մի արկղում կար 32 գրուանքայ թէյ, իսկ միւսում՝ 25 գրուանքայ։ Ո՞րքան թէյ պէտք է աւելացնել իւրաքանչիւրի վրայ, որ երկուսումն էլ լինի հաւասար և բոլորը միասին 92 գրուանքայ։

**269.** Երկու մանրավաճառ 80 նարինջ ունէին։ Երբ առաջինը երկրորդին տուեց 12 նարինջ, այն ժամանակ երկրորդի մօտ երեք անգամ աւելի եղաւ։ Քա՞նի նարինջ ունէր ամեն-մէկը։

**270.** Փողոցի երկու ծայրից միևնոյն ժամանակ իրար դէմ դուրս եկան երկու երեխայ և 5 րոպէից յետոյ իրար պատահեցին։ Մէկը մի րոպէում անցնում էր 9 սաժեն,

իսկ միւսը՝ 8 սաժեն։ Ո՞րքան էր փողոցի երկարութիւնը։

271. Եղբայրն ունի 64 կոպէկ, իսկ քոյրը՝ 48 կոպէկ։ Եղբայրը նախաճաշի համար օրական ծախսում է 9 կոպէկ, իսկ քոյրը՝ 5 կոպէկ։ Քանի օրից յետոյ նրանց փողերը կը հաւասարուին։

272 Վաճառականը գնեց մի քանի փութ շաքար, փութը 5 րուբլու։ Ճանապարհին 6 փութը թրջաւ, մնացածի փութը ծախելով 7 րուբլու, օգուտ արաւ 16 րուբլի։ Քանի փութ շաքար էր առել։

273. Երեք դասարանում միասին 95 աշակերտ կայ։ Առաջինում և երկրորդում միասին 68 հոգի են, իսկ երկրորդում և երրորդում միասին՝ 49 հոգի են։ Քա՞նի աշակերտ կայ ամեն-մի դասարանում։

274. Գիւղացին 40 րուբլի փող ունէր։ Նա գնեց 6 ոչխար, ամեն-մէկը 3 րուբլով, մնացած փողով ուզում էր գնել մի կով, բայց պակասում էր 7 րուբլի։ Քա՞նի րուբլի արժէր կովը։

275. Աշակերտը 5 գիրք տուեց կազմելու. կազմարարը 2 գրքի համար վերցրեց 12-ական կոպէկ, իսկ մնացածների համար՝ 16-ական կոպէկ։ Ո՞րքան փող վճարեց աշակերտը։

276 Հայրը գնեց 7 դիւժին գրչածայր. նրանց կէսը պահեց իրան համար. երրորդ մասը տուեց աղջկան, իսկ մնացածը հաւասար բաժանեց երկու որդիներին։ Քա՞նի գրչածայր ստացաւ ամեն մի որդին։

277. Լճի երեսին լողում էին 18 վայրենի բադ և 4 անգամ աւելի՝ նրանց ձագերը։ Որսորդը սպանեց բադերի երրորդ մասը, իսկ ձագերի վեցերորդ մասը։ Քա՞նի թռչուն կենդանի մնաց։

278. Մի տակառ, որ տանում էր 78 վեդրո ջուր, ուզում էին լցնել ջրով. դրա համար դրին երեք մեքենայ. առաջինը մի րոպէում լցնում էր 7 վեդրո, երկրորդը՝ 9

վեդրո և երրորդը՝ 10 վեդրո։ Քանի բոպեից յետոյ լցուեց տակառը։

279. Խանութպանը 4 գրուանքայ ալիւրը առնում է 17 կոպէկի, իսկ ինքը 5 գրուանքան ծախում է 24 կոպէկի։ Ո՞րքան օգուտ կ՚անի նա, եթէ ընդամենը ծախի 20 գրուանքայ ալիւր։

280. Աշակերտը արձակուրդ ստացաւ 8 շաբաթ և 6 օր. 9 օր ապրեց ընկերոջ մօտ, երկու շաբաթ տատի մօտ, իսկ մնացած ժամանակը ծնողների մօտ։ Քանի օր մնաց ծնողների մօտ։

281. Գիւղացին 90 ռուբլի փող ունէր։ Նրանց կէս մասով գնեց մի ձի, երրորդ մասով՝ մի կով, իսկ մնացած փողով 3 ոչխար։ Ո՞րքան արժէր ամեն-մի ոչխարը։

282. Երեք երեխայ միասին 83 կոպէկ ունէին։ Առաջին երկուսի ունեցածը հաւասար էին, իսկ երրորդը՝ 4 կոպէկ պակաս ունէր։ Քանի կոպէկ ունէր ամեն-մի երեխան։

283. Խանութում 75 կոպէկի ալիւրը ծախեցին երկու մարդու. մէկը միւսից պակաս վճարեց 25 կոպէկ։ Քանի գրուանքայ ալիւր գնեց ամեն-մէկը, եթէ ալիւրի գրուանքան արժէր 5 կոպէկ։

284. Երեք քարտաշ միասին ստացան 91 ռուբլի. մէկը աշխատեց 4 շաբաթ, երկրորդը՝ 3 շաբաթ և երրորդը՝ 6 շաբաթ։ Ի՞նչպէս պէտք բաժանեն նրանք այդ փողերը։

285. Մի առու, որի երկարութիւնն էր 72 սաժեն, փորեցին 5 օրում։ Առաջին օրը փորեցին չորրորդ մասը, երկրորդ օրը՝ վեցերորդ մասը, երրորդ օրը՝ երկու իններորդ մասը, չորրորդ օրը՝ 1 սաժեն երրորդ օրուանից պակաս, իսկ հինգերորդ օրը՝ մնացածը։ Քանի սաժեն փորեցին հինգերորդ օրը։

286. Իննսուն և եօթ արշին քաթանից կարեցին 6 սփռոցներ, ամեն երկու սփռոցին գործածելով 11 արշին.

իսկ մնացած քաղաքանից կարեցին շապիկներ, ամեն-մէկը 4 արշինից։ Քանի շապիկ կարեցին։

---

## ԳՐԱՒՈՐ.

**1.** $(72:2)+(12\times4)-(96:8)=$
$(13\times6)-(52:4)+(7\times5)=$
$(27\times3)-(70:5)-(48:2)=$
$(13\times7)+(98:14)-(19\times5)=$
$(100:4)+(16\times3)-(72:6)=$

**2.** $(78:2)+(66:3)-(57:19)=$
$(2\times47)+(81:27)-(46\times2)=$
$(32\times2)-(54:2)+(100:25)=$
$(2\times45)-(26\times3)+(64:16)=$
$(28\times3)+(70:36)-(96:2)=$

**3.** $(56:14)\times(49:7)\times(16\times3)=$
$(72:4)\times(64:16)-(8\times9)=$
$(9\times9):(63-36)+(42:6)=$
$(64:4)\times(48:8):(96:24)=$
$(78:13)\times(55-39):(48:4)=$

**4.** $(2\times27)-(54:27)-(54:6)=$
$(82\times2)-(56:8)-(55:5)=$
$(11\times7)-(75:3)-(65:13)=$
$(4\times18)-(70:14)+(68:17)=$
$(5\times13)-(66:11)-(64:16)=$

**5.** ( 8×12)—(65 : 5)+ 7=
( 4×24)—(92 : 4)+ 9=
(78 : 3)+( 3×24)—81=
( 4×25)—(19× 3)— 7=
(35 : 5)+( 4×18)—16=

**6.** 86—(74 : 2)—(36 : 3)=
74+(46 : 23)—(36 : 4)=
81—(63 : 9)—(81 : 27)=
45+(12× 4)—(39 : 4)=
(54 : 9)+(25× 3)—16 =

**7.** (24× 4)— 37+(84 : 14)=
( 7× 7)—( 8× 9)+(19× 3)=
(78 : 13)+(12× 7)—( 5× 9)=
(63 : 7)+(24× 3)+(95 : 5)=
(18× 3)—(45 : 3)+(64—19)=
(13× 3)+(75 : 15)+(17× 3)=

**8.** ( 6×13)—25+(48 : 12)—(77 : 7)=
(16× 5)—(78 : 13)—25+(76 : 4)=
( 9× 9)+(52 : 13)—36+(91 : 7)=
(82 : 2)—17+( 2×27)—(81 : 27)=
( 5×17)—(86 : 2)+41—(86 : 43)=
( 7×13)—38+(90 : 18)+(85 : 17)=

## ՏԵՍԱԿԱՒՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ

### I.

*Մի քանի միաւորով եւ մի քանի անգամ մեծացնել եւ փոքրացնել.*

287. Մայրը 39 տարեկան է, հայրը մեծ է նրանից 10 տարով, իսկ որդին փոքր է հօրից 7 անգամ։ Քանի՞ տարեկան է որդին։

288. Գիւղացին 14 փութ ցորեն ունէր, 6 անգամ աւելի գարի։ Գարու չորրորդ մասը ծախեց և ցորեն առաւ։ Ո՞րքան գարի մնաց իւր մօտ։

289. Գիւղը 77 հոգի բնակիչ ունի։ Տղամարդիկ 2 անգամ շատ են կանանցից, իսկ կանայք 2 անգամ շատ են երեխաներից։ Քանի երեխայ կայ այդ գիւղում։

290 Երեխան մի գրպանում 26 ընկուզ ունէր, իսկ միւսում՝ 25 այդ ընկուզները սեղանի վրայ դարսեց 2 խումբ, այնպէս, որ մէկը միւսից 2 անգամ աւելի եղաւ։ Քա՞նի ընկուզ դրեց ամեն մի խմբի մէջ։

291 Դերձակը գնեց 24 արշին մոխրագոյն մահուդ, նրանցից 3 անգամ աւելի սև մահուդ, իսկ վերջինից 8 անգամ պակաս կապոյտ մահուդ։ Քա՞նի արշին կապոյտ մահուդ գնեց։

292. Պարտիզպանը մի մարգից պոկեց 14 գլուխ կաղամբ, միւսից՝ 2 անգամ աւելի։ Բոլորը նա ծախեց 2 մարդու հաւասար կերպով։ Քա՞նի կաղամբ ծախեց ամեն մէկին։

293. Մեծ եղբայրը 18 տարեկան է, միջնակը նրանից 3 անգամ փոքր, իսկ կրտսերը միջնակից 3 անգամ փոքր է։ Քանի տարեկան է կրտսեր եղբայրը։

294. Այսօր ես ծախսեցի 78 կոպէկ, իսկ երեկ՝ 13 անգամ պակաս և այժմ ինձ մօտ 8 անգամ աւելի փող կայ, քան երեկ ես ծախսեցի։ Այժմ ո՞րքան փող կայ ինձ մօտ։

295. Մի մարդ նոր խանութ բաց արաւ։ Առաջին օրը առևտուր արաւ 24 րուբլու, երկրորդ օրը՝ 18 րուբլի աւելի, իսկ երրորդ օրը՝ 3 անգամ պակաս, քան առաջին երկու օրը միասին։ Ո՞րքան փող ստացաւ երեք օրում։

296. Գիւղացին 7 փութ գարի ցանեց և բերքը ստացաւ մէկին վեց։ Նրա երրորդ մասը ծախեց, 2 անգամ աւելի պահեց սերմացուի համար։ Ո՞րքան գարի աւելացաւ

297. Գիւղացին գնեց մի ձի և մի կով։ Կովին վճա-

ըեց էր փողի հինգերորդ մասը, իսկ ձիուն՝ 3 անգամ աւելի։ Ո՞րքան փող ունէր նա, եթէ իր մօտ աւելացաւ էլի 15 ռուբլի։

---

II.

## ՎԵՐԱԾԵԼ ՄԻՈՒԹԵԱՆ

**299.** 25 արշին ժապաւէնը արժէ մի ռուբլի։ Ո՞րքան արժէ նոյն ժապաւէնի 16, 19, 14, 15 արշինը։

**300.** Ձիւորը 9 ժամում անցնում է 54 վերստ։ Քանի վերստ կանցնի 7, 9, 12, 14 ժամում։

**301.** Դերձակը 78 արշին մահուդից 13 վերարկու կարեց։ Քանի արշին մահուդ է հարկաւոր 7, 5, 10 վերարկու կարելու համար։

**302.** Տասներկու գրուանքայ վուշից ստացւում է 3 գրուանքայ ձէթ։ Ո՞րքան ձէթ կ'ստացուի 84 գրուանքայ վուշից։

**303.** Երեք դարբինը 6 օրում վաստակեցին 72 ռուբլի։ Ո՞րքան կ'ստանան 5 դարբինը 3 օրում։

**304.** Ութը լապտերի մէջ 4 օրում այրւում է 64 գրուանքայ նաւթ։ Որքան նաւթ կ'այրուի 12 լապտերի մէջ 3 օրում։

**305** Տասներկու բանւորին 4 օրուայ համար տալիս են 96 գրուանքայ հաց։ Քանի գրուանքայ հաց պէտք է տալ 8 բանւորին 5 օրում։

**306.** Կառապանը 15 օրում 6 ձիուն ուտեցնում է 81 փութ գարի։ Ո՞րքան գարի կը գնայ 2 ձիուն 5 օրում։

**307.** Ճամբորդը օրական 7 ժամ գնալով, 4 օրում կարող է անցնել 84 վերստ։ Օրական քանի ժամ պիտի գնայ, որ 10 օրում անձնի 90 վերստ։

**308.** Տասն և մէկ մարդ կերակրելու համար 8 օրում

ծախսեցին 88 րուբլի։ Ո՞րքան փող է հարկաւոր 5 մարդուն 15 օր կերակրելու համար։

---

III.

## ԱՆՀԱՒԱՍԱՐ ՄԱՍԵՐ

**309.** Երեսուն և եօթ արշին ժապաւէնը երկու կտոր արին այնպէս, որ մէկը միւսից 9 արշին երկար դուրս եկաւ։ Քանի արշին եղաւ ամեն-մի կտորը։

**310.** Գիւղացին երկու ամբարում ունէր 95 փութ գարի, մէկում միւսից 25 փութ աւելի։ Ո՞րքան գարի կար ամեն-մի ամբարում։

**311.** Մրգավաճառը երեք կողովի մէջ 47 նարինջ ունէր։ Առաջին երկու կողովների մէջ նարինջները հաւասար էին, իսկ երրորդի մէջ առաջիններից 5 նարինջ աւելի կար։ Քանի նարինջ կար ամեն-մի կողովում։

**312.** Աշակերտը 75 կոպէկի երկու գիրք գնեց. մէկը միւսից 15 կոպէկ թանկ արժէր։ Ո՞րքան արժէր ամեն-մի գիրքը։

**313.** Երկու եղբայր հօրից ստացան 55 կոպէկ, մէկը միւսից 15 կոպէկ աւելի ստացաւ։ Քանի կոպէկ ստացաւ ամեն-մի եղբայրը։

**314.** Երկու դասարանում միասին 67 աշակերտ կայ. երկրորդ դասարանում առաջինից 19 աշակերտ քիչ կայ։ Քանի աշակերտ կայ ամեն-մի դասարանում։

**315** Երկու ընկեր իրանց մէջ բաժանեցին 59 թերթ թուղթ, մէկը միւսից 3 թերթ աւելի ստացաւ։ Քանի թերթ թուղթ ստացաւ ամեն-մէկը։

**316.** Պահարանի 3 դարակում 70 գիրք կայ. Ներքին դարակում 9 գիրք պակաս է, քան միջինում և միջին

դարակում 7 գիրք քիչ է, քան վերին դարակում։ Քանի գիրք կայ ամեն-մի դարակում։

317. Երեք գիւղում միասին 45 տուն կայ. առաջին գիւղում 13 տուն քիչ է, քան երկրորդ և երրորդ գիւղերում, իսկ երրորդում 5 տուն աւելի է քան երկրորդ գիւղում։ Քանի տուն կայ ամեն-մի գիւղում։

318. Երկու երեխայ միասին 71 ընկուզ ունին։ Մէկը միւսից 15 ընկուզ աւելի ունի։ Ո՞րքան ընկուզ ունի ամեն-մի երեխան։

---

IV.

## ՕԳՈՒՏ ԵՒ ՎՆԱՍ

319. Վաճառականը գնեց 13 փութ շաքար. ամեն-մի փութը 6 րուբլիով. ինքը նոյն շաքարը ծախեց 85 րուբլու։ Ո՞րքան օգուտ ստացաւ։

320. Մրգավաճառը 3 լիմոնը առնում էր 12 կոպէկի, իսկ ինքը նոյն լիմոնի 4 հատը ծախում էր 24 կոպէկի։ Ո՞րքան օգուտ արաւ նա, եթէ ընդամենը ծախեց 36 լիմոն։

321. Վաճառականը մի արշին մահուդը առնում է 6 րուբլու, իսկ ինքը ծախում է 8 րուբլու։ Քանի արշին մահուդ պիտի ծախէ, որ օգուտ անէ 70 րուբլի։

322. Անասնավաճառը 6 ոչխարը առաւ 18 րուբլու, իսկ ինքը 4 ոչխարը ծախեց 24 րուբլու։ Քանի ոչխար ծախեց նա, եթէ օգուտ արաւ 72 րուբլի։

323. Գիւղացին քաղաք էր տանում ծախելու 6 տասնեակ ձու։ Ճանապարհին կողովը վայր ընկաւ և 18 ձու կոտրուեցաւ։ Մնացածի տասնեակը ծախեց 20 կոպէկի։ Ո՞րքան վնաս արաւ։

324. Գործարանատէրը 3 գրուանքայ բուրդը առնում է մի րուբլու, իսկ ինքը 3 արշին շալը ծախում է 4 րուբ-

լու։ Ո՞րքան օգուտ կ՚ստանայ նա, եթէ որ գնի 78 գըրուանքայ բուրդ, որից կստացուի 36 արշին շալ։

**325.** Խանութպանը 7 կաթսան առնում է 49 րուբլու, իսկ ինքը 9 հատը ծախում է 81 րուբլու։ Քա՞նի կաթսայ ծախեց նա, եթէ որ բոլորի մէջ օգուտ արաւ 92 րուբլի։

**326.** Խանութպանը առաջին օրը ծախեց 15 գրուանքայ շաքար, երկրորդ օրը՝ 17 գրուանքայ և բոլորի մէջ օգուտ արաւ 64 կոպէկ։ Ո՞րքան օգուտ ստացաւ ամեն-մի գրուանքայից։

---

## V.

## ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆ.

**327.** Երկու խումբ բանւորներ աշխատեցին 90 րուբլի։ Մէկ խմբի մէջ կար 8 հոգի, միւսի մէջ՝ 7 հոգի։ Ի՞նչպէս պէտք է բաժանեն այդ փողը և ո՞րքան պիտի ստանայ ամեն-մի խումբը։

**328.** Երկու մարդ միասին փող վեր եկան և 16 արշին մահուդ առան։ Մէկը տուեց 24 րուբլի, իսկ միւսը՝ 40 րուբլի։ Քա՞նի արշին մահուդ պիտի վերցնէ ամեն-մէկը։

**329.** Հրդեհից վնասուած երեք ընտանիքի բաժանեցին 98 րուբլի, ամեն-մի հոգուն հաւասար կերպով։ Մի ընտանիքում 5 հոգի կար, երկրորդում՝ 3 հոգի և երրորդում՝ 6 հոգի։ Ո՞րքան փող ստացաւ ամեն-մի ընտանիքը։

**330** Երկու ատաղձագործ աթոռներ նորոգելու համար ստացան 99 րուբլի։ Մէկը նորոգեց 19 աթոռ, միւսը 14 աթոռ։ Ի՞նչպէս պիտի բաժանեն այդ փողը։

**331.** Երեք աշակերտ միասին 57 գրչածայր գնեցին։ Մէկը տուեց 7 կոպէկ, միւսը՝ 8 կոպէկ և երրորդը՝ 4 կոպէկ։ Ո՞րքան գրչածայր պիտի վերցնէ ամեն-մի երեխան։

**332.** Խանութպանը գնեց 4 կտոր քաթան, բոլորը 72 արշին։ Առաջին կտորին վճարեց 6 րուբլի, երկրորդին՝ 3 րուբլի։ երրորդին՝ 4 րուբլի և չորրորդին՝ 5 րուբլի։ Քանի արշինից էր ամեն-մի կտորը։

**333.** Երեք մարդ միասին մահուդ գնեցին և վճարեցին 93 րուբլի։ Մէկը գնեց 8 արշին, միւսը՝ 10 արշին և երրորդը՝ 13 արշին. Ո՞րքան փող վճարեց ամեն-մէկը։

**334.** Երկու քաղաքացի գիւղացուց 9 փութ իւղ գնեցին։ Մէկը տուեց 27 րուբլի միւսը՝ 2 անգամ աւելի։ Ո՞րքան իւղ ստացաւ ամեն-մէկը։

**335**. Մի երեխայ գնեց 4 գրուանքայ շլոր, միւսը՝ 7 գրուանքայ և երկուսով միասին վճարեցին 66 կոպէկ։ Ո՞րքան փող ծախսեց ամեն-մի երեխան։

**336**. Երկու մսագործ մորթելու համար 15 ոչխար գնեցին։ Մէկը տուեց 30 րուբլի, իսկ միւսը՝ 2 անգամ աւելի։ Քանի ոչխար վերցրեց ամեն-մէկը։

---

VI.

## ԱՆՀԱՄԱՉԱՓ ԲԱԺԱՆՈՒՄՆ

**337** Երկու կողովի մէջ 52 խնձոր կար, մէկում միւսից 3 անգամ աւելի։ Քանի խնձոր կար ամեն-մի կողովում։

**338**. Երկու բանւոր միասին ստացան 64 րուբլի, մէկը միւսից 3 անգամ աւելի ստացաւ։ Ո՞րքան փող ստացաւ ամեն-մէկը։

**339**. Երկու մրգավաճառ 92 ձմերուկ առան։ Երբ մէկը ծախեց 20 ձմերուկ, այն ժամանակ երկրորդի մօտ 7 անգամ աւելի մնաց։ Քանի ձմերուկ էր առել ամեն-մէկը։

**340**. Երեք երեխայ իրար մէջ բաժանեցին 90 ընկոյզ,

այնպէս, որ երկրորդը 4 անգամ առաջինից աւելի ստացաւ, իսկ երրորդը ստացաւ այնքան, որքան երկրորդը։ Քա՞նի ընկոյզ ստացաւ ամէն-մի երեխան։

341. Երեք կառապան միասին 96 փութ խոտ գնեցին և բաժանեցին իրանց մէջ. առաջինը 2 անգամ աւելի ստացաւ երկրորդից, իսկ երրորդը 3 անգամ աւելի երկրորդից։ Ո՞րքան խոտ վերցրեց ամէն-մէկը։

342. Երեխան 72 ծաղիկ քաղեց և ուզում է փունջ կապել. կէս մասը պիտի լինի վարդեր, չորրորդ մասը կակաչներ, չորրորդ մասն էլ դաշտային ծաղիկ։ Ո՞րքան ծաղիկ պիտի վերցնէ ամէն-մի տեսակից։

343. Հայրը, մայրը և թոռը միասին 96 տարեկան են։ Մայրը 2 անգամ փոքր է հօրից, թոռը 5 անգամ փոքր է մօրից։ Քա՞նի տարեկան է ամէն-մէկը։

344. Մի մարդ ամսական ստանում է 84 րուբլի։ Այդ փողերի մի մասը ուղարկում է ծնողներին, դրանից 2 անգամ աւելի տալիս է տան քրէհ, իսկ 3 անգամ աւելի ուրիշ ծախսեր է անում։ Իմանալ նրա ամսական ծախսերը։

345. Հարսանիքի ժամանակ հրաւիրուած էին 69 հիւրեր։ Տղամարդիկ 2 անգամ շատ էին կանանցից։ Քա՞նի տղամարդ և քանի կին կար այդ հարսանիքում։

346. Երեք եղբայր հօրից 72 կոպ. ստացան։ Միջնակը 2 անգամ աւելի ստացաւ փոքրից, իսկ մեծը 3 անգամ աւելի։ Ո՞րքան փող ստացաւ ամէն-մի եղբայրը։

347. Երկու տակառի մէջ 39 վեդրո գինի կայ, մէկում 2 անգամ աւելի, քան միւսում։ Ո՞րքան գինի կայ ամէն-մի տակառում։

## VII.

## ՀԱՆԴԻՊՈՒՄՆ

348. Երկու գիւղերի միջի տարածութիւնն է 65 վերստ։ Այդ գիւղերից միևնոյն ժամանակ դուրս եկան եր-

կու գիւղացի և գնում են իրար հանդէպ։ Մէկը մի ժամում անցնում է 7 վերստ, իսկ միւսը—6 վերստ. Որքան իրար մօտեցած կլինին մի ժամից յետոյ։ Քանի ժամից յետոյ նրանք իրար կը հանդիպեն։

**349** Մի առու, որի երկարութիւնն է 96 սաժ., ըսկսեցին մաքրել միևնոյն ժամանակ երկու հակառակ ծայրերից։ Մի կողմից օրական մաքրում են 9 սաժ., իսկ միւս կողմից՝ 7 սաժ. Քանի օրից յետոյ առուն մաքրուած կը լինի։

**350**. Գիւղից դուրս եկաւ դէպի քաղաք մի կին և ամեն-մի ժամում գնում է 3 վերստ։ Երկու ժամից յետոյ նրա յետևից դուրս եկաւ նրա որդին և ամեն մի ժամում գնում է 5 վերստ. Քանի ժամից յետոյ որդին հասաւ մօրը։

**351**. Երկու ճանապարհորդ դուրս եկան 2 զանազան քաղաքներից և գնում են իրար հանդէպ։ Մէկը գնում է մի ժամում 8 վերստ, իսկ միւսը—12 վերստ։ Քանի ժամից յետոյ նրանք կը պատահին իրար, եթէ բոլոր ճանապարհի երկարութիւնը 100 վերստ է։

**352**. Երկու զանազան քաղաքներից, որ հեռու են իրարից 72 վերստ, միևնոյն ժամին դուրս եկան երկու ոտաւոր և 8 ժամից յետոյ իրար պատահեցան։ Իմանալ որքան էր գնում մի ժամում երկրորդ ոտաւորը, եթէ առաջինը անցնում էր 4 վերստ։

**353** Երկու նաւահանգիստներից, որ հեռու են իրարից 81 վերստ, միևնոյն ժամին դուրս եկան երկու շոգենաւ և գնում են իրար հանդէպ։ Մէկը մի ժամում անցնում է 12 վերստ, իսկ միւսը—15 վերստ։ Քանի ժամից յետոյ նրանք կը հանդիպեն իրար։

**354**. Գիւղացին դուրս եկաւ գիւղից դէպի քաղաք և ամեն-մի ժամում գնում է 7 վերստ։ Չորս ժամից յետոյ նոյն գիւղից դուրս եկաւ մի կառք և ամեն-մի ժամում գնում է 9 վերստ։ Քանի ժամից յետոյ կառքը կը հասնի գիւղացուն։

**355.** Երկու աշակերտ միևնոյն փողոցով գնում են ուսումնարան։ Նրանցից մէկը մի րոպէում անում է 10 քայլ, իսկ միւսը՝ 12 քայլ։ Երկրորդ աշակերտը 8 րոպէից յետոյ քանի քայլ կարող է առաջ անցնել, եթէ որ առաջինը նրանից 6 քայլ առաջ է և եթէ որ երկուսի քայլերն էլ հաւասար են։

**356.** Երկու մարդ միևնոյն ժամին դուրս եկան երկու զանազան քաղաքներից, որ իրարից հեռու են 91 վերստ և գնում են իրար հանդէպ։ Մէկը գնում է մի ժամում 4 վերստ, իսկ միւսը՝ 3 վերստ։ Որքա՞ն տարածութեան վրայ նրանք իրար կը հանդիպին։

**357.** Միևնոյն օրը և միևնոյն քաղաքից դուրս եկան երկու կարաւան։ Մէկը դուրս եկաւ առաւօտեան 7 ժամին և ամեն-մի ժամում գնում է 4 վերստ. միւսը դուրս եկաւ 12 ժամին և ամեն մի ժամում գնում է 6 վերստ։ Որ ժամին և քաղաքից որքան հեռաւորութեան վրայ երկրորդ կարաւանը կը հասնի առաջինին։

**358.** Երկու առևտրական դուրս եկան երկու զանազան քաղաքներից և գնում են իրար հանդէպ։ Մէկը գնում է մի ժամում 7 վերստ, իսկ միւսը՝ 9 վերստ։ Նրանք իրար պատահեցան 6 ժամից յետոյ։ Իմանալ, քանի վերստ է մի քաղաքից մինչև միւսը և որքան է մնում ամեն-մէկին շարունակելու ճանապարհը։

**359** Մի գիւղացի դուրս եկաւ քաղաքից դէպի գիւղ, իսկ միւսը՝ գիւղից դէպի քաղաք։ Առաջինը մի ժամում գնում է 8 վերստ, իսկ միւսը 11 վերստ և քաղաքից 48 վերստի վրայ նրանք իրար պատահեցան։ Իմանալ առաջին գիւղացին քանի ժամ կանուխ էր դուրս եկել քաղաքից, եթէ քաղաքը գիւղից հեռու է 81 վերստ։

**360** Երկու գիւղացի զանազան ժամանակ դուրս եկան գիւղից և գնում են դէպի քաղաք։ Առաջինը մի ժամում գնում է 4 վերստ, իսկ միւսը՝ 6 վերստ և երկրորդը գիւղից 72 վերստ հեռաւորութեան վրայ հասաւ առաջինին։

Երկրորդ գիւղացին առաջինից քանի ժամ ուշ էր գուրս եկել։

VIII.

## ՓՈԽԱՆԱԿՈՒԹԻՒՆ

**361.** Մի մրգավաճառ միւսին տուեց 18 խնձոր, որոնց տասնեակն արժէր 50 կոպ. և դրանց փոխարէն ստացաւ մի քանի լիմոններ, որոնց մի հատը արժէր 6 կոպէկ։ Քանի լիմոն ստացաւ նա։

**362.** Երկու վաճառական իրար հետ ապրանք փոխանակեցին. մէկը տուեց 4 գրուանքայ շաքար, որի գրուանքան արժէր 18 կոպ., իսկ միւսը դրա փոխարէն տուեց երկու գրուանքայ սուրճ, որի գրուանքան արժէր 48 կոպ. Ո՞ր վաճառականը պէտք է դարձնել փող տայ և որքան։

**363.** Վաթսուն և չորս խնձորը արժէ 32 կոպ., իսկ 54 տանձը արժէ 18 կոպ։ Եղբայրը քրոջը տուեց 24 խնձոր և նրանց փոխարէն ստացաւ տանձեր։ Քանի տանձ տուեց քոյրը եղբօրը։

**364.** Մի գեղջկուհի միւսին տուեց 16 գրուանքայ ոչխարի բուրդ և նրա փոխարէն ստացաւ պատրաստի գուլպաներ։ Քանի գուլպայ ստացաւ նա, եթէ բրդի գրուանքան արժէ 4 կոպ , իսկ մի զոյգ գուլպան արժէ 32 կոպ.

**365.** Մի եղբայրը գնեց 9 նարինջ և վճարեց 81 կոպ. իսկ միւսը գնեց 18 խնձոր և վճարեց երեք անգամ պակաս փող։ Առաջին եղբայրը տուեց 2 նարինջ և նրանց փոխարէն ստացաւ խնձորներ։ Քանի խնձոր ստացաւ նա։

**366.** Մի վաճառական միւսին տուեց մի կտոր մահուդ և նրա փոխարէն ստացաւ 28 գրուանքայ թէյ և 10 րուբլի էլ փող։ Մի գրուանքայ թէյն արժէր 2 րուբլի, իսկ մի արշին մահուդը՝ 3 րուբլի։ Քանի արշին էր մահուդի կտորը։

**367.** Երկու խանութպան իրար հետ ապրանք փոխանակեցին։ Մէկը տուեց չորս արշին չիթ, որի մի արշինը արժէր 14 կոպ. իսկ միւսը տուեց 4 արշին կումաչ, որի մի արշինը արժէր 23 կոպ. Երկուսից ո՞րը պէտք է էլի փող տայ և ո՞րքան։

**368.** Մի վաճառական միւսին առաջարկում է գըրուանքան 4 րուբլիանոց թէյի փոխարէն մի քանի արշին մահուդ, որի արշինն արժէ 5 րուբլի և էլի 30 րուբլի փող, կամ ուրիշ տեսակ մահուդ, որի արշինն արժէ 8 րուբլի, առանց փող աւելացնելու։ Քանի գրուանքայ թէյ կարող է նա ստանալ։

---

## IX.

**369.** Երկու եղբայր միասին 87 կոպէկ փող ունէին. երբ նրանք աղքատներին հաւասար կերպով փող բաժանեցին, այն ժամանակ մէկի մօտ մնաց 24 կոպէկ, իսկ միւսի մօտ՝ 19 կոպ. Քանի կոպ ունէր ամեն-մի եղբայրը։

**370.** Քոյր և եղբայր միասին 49 խնձոր ունէին։ Երբ եղբայրը կերաւ 3 խնձոր, իսկ քոյրը՝ 8 խնձոր, այն ժամանակ նրանց մօտ մնացին հաւասար թուով խնձորներ։ Քա՞նի խնձոր ունէր ամեն-մէկը։

**371.** Երկու դասարանում 76 աշակերտ կար. երբ մի դասարանից դուրս գնացին 18 հոգի, իսկ միւսից 4 հոգի, այն ժամանակ երկու դասարանումն էլ մնացին հաւասար թուով աշակերտներ։ Քա՞նի աշակերտ կար ամեն-մի դասարանում։

**372** Երկու աշակերտ 71 կոպ. փող ունէին։ Երբ նրանք հաւասար թուով տետրակներ առան, այն ժամանակ մէկի մօտ մնաց 9 կոպ. իսկ միւսի մօտ՝ 6 կոպ. Քա՞նի կոպէկ ունէր ամեն-մի աշակերտը։

**373.** Հայրս և հօրեղբայրս 81 փութ ալիւր տարան

քաղաք ծախելու։ Երբ նրանք հաւասար կերպով ծախեցին, մէկի մօտ մնաց 7 փութ, իսկ միւսի մօտ 4 փութ։ Քանի փութ ալիւր էր տարել ամեն-մէկը։

374. Երկու եղբայր միասին 60 ընկուզ ունէին։ Երբ մեծ եղբայրը փոքրին տուեց 10 ընկուզ, այն ժամանակ երկուսի ունեցածն էլ հաւասարուեցաւ։ Քանի ընկուզ ունէր ամեն-մի եղբայրը։

375. Երկու գրպանումս 32 կոպէկ փող կայ։ Եթէ մի գրպանիցս 5 կոպէկ վերցնեմ և դնեմ միւս գրպանս, այն ժամանակ երկուսումն էլ հաւասար կը լինի։ Քանի կոպէկ ունիմ այժմ ամեն-մի գրպանումս։

---

## X.

376. Երկու գիւղացի 83 սաժեն փայտ ունէին։ Երբ նրանք հաւասար կերպով ծախեցին, մէկի մօտ մնաց 22 սաժեն, միւսի մօտ՝ 19 սաժեն։ Քանի սաժեն փայտ ունէր ամեն-մէկը։

377. Երկու ամբարում 93 փութ գարի կար։ Երբ մէկից ծախեցին 27 փութ, միւսից՝ 34 փութ, այն ժամանակ երկուսումն էլ մնաց հաւասար։ Քանի փութ գարի կար ամեն-մի ամբարում։

378. Քաղաքացին գիւղացուց գնեց 64 հնդկահաւ և ամեն 8 հատին վճարեց 7 րուբլի։ Որքան փող վճարեց նա։

379. Տակառը տանում է 90 վեդրո ջուր։ Որքան ժամանակում բոլոր ջուրը կը դատարկուի, եթէ ամեն 5 րոպէում դուրս է թափում 9 վեդրո ջուր։

380. Հացթուխը 60 գրուանքայ ալիւրից խմոր հունձեց. որքան եփած հաց կստանայ նա, եթէ 15 գրուանքայ ալիւրից ստացւում է 20 գրուանքայ հաց։

381. Պղնձագործն ունէր 72 գրուանքայ պղինձ. այդ պղնձից նա շինեց կաթսաներ, ամեն հինգ կաթսայի հա-

մար բանեցրեց 18 գրուանքայ պղինձ։ Քանի կաթսայ շինեց նա։

382. Ալախինը 75 կոպէկի նարինջներ գնեց և ամեն երեք հատին վճարեց 15 կոպ. Որքա՛ն նարինջ գնեց նա։

383. Այգեպանը մի խնձորենուց պոկեց 38 խնձոր, միւսից 16 հատ պակաս։ Բոլոր խնձորները ծախեց 5 հատը 8 կոպէկով։ Որքան փող ստացաւ նա։

384. Տանտիկինը գնեց երկու գլուխ շաքար, մէկը միւսից ծանր էր 6 գրուանքայ. բոլոր շաքարը նա բանեցրեց 27 օրում, ամեն 3 օրը 4 գրուանքայ։ Որքան էր քաշում ամեն-մի գլուխ շաքարը։

385. Խանութպանը 65 րուբլու մի կտոր մահուդ գնեց, որի երկարութիւնն էր 35 արշին։ Որքան օգուտ ստացաւ նա եթէ ամեն 5 արշինը ծախեց 12 րուբլու։

---

## XI.

## ԽԱՌՆՈՒՐԴ

386 Խանութում իրար խառնեցին երկու տեսակ ալիւր։ Մի տեսակից վերցրին 6 գրուանքայ, որի գրուանքան արժէր 3 կոպ. միւս տեսակից՝ 9 գրուանքայ, որի մի գրուանքան արժէր 8 կոպ Քանի կոպէկով պէտք է ծախել խառնուրդի մի գրուանքան։

387. Գրուանքան 37 կոպէկանոց սուրճը խառնեցին մի գրուանքայ 49 կոպէկանոց սուրճի հետ։ Քանիսով պէտք է ծախել խառնուրդի մի գրուանքան։

388. Հինգ գրուանքայ 7 կոպէկանոց ալիւրը խառնեցին 4 գրուանքայ 4 կոպէկանոց ալիւրի հետ և բոլոր խառնուրդը ծախեցին 80 կոպէկի։ Որքան օգուտ ստացան։

389. Չորս շիշ 12 կոպէկանոց քացախը խառնեցին 2 շիշ 15 կոպէկանոց քացախի հետ։ Քանիսով պիտի ծախեն

սռնուրդի ամեն-մի շիշը, որ օգուտ ստանան 12 կոպէկ։

390. Խանութպանը երկու տեսակ շաքարաւազ խառնեց իրար հետ. մի տեսակից վերցրեց 5 գրուանքայ, որի ֆրուանքան արժէր 9 կոպէկ, միւս տեսակից վերցրեց 2 գրուանքայ, որի գրուանքան արժէր 12 կոպէկ։ Քանիսո՞վ ծախեց նա խառնուրդի մի գրուանքան, եթէ որ բոլորի մէջ վնաս արաւ 13 կոպէկ։

391. Մրգավաճառը երկու տեսակ խաղող խառնեց իրար. մի տեսակի գրուանքան արժէր 13 կոպ., միւս տեսակինը՝ 9 կոպէկ։ Խառնուրդի գրուանքան դուրս եկաւ 10 կոպ. Իմանալ, երկրորդ տեսակից քանի գրուանքայ պէտք է խառնել առաջին տեսակի մի գրուանքայի հետ, որ ո՛չ օգուտ անէ և ո՛չ վնաս։

392. Երկու տեսակ գարի խառնեցին իրար և բոլոր խառնուրդը ծախեցին 77 ռուբլու։ Լաւ տեսակից վերցրին 5 սոմար, որի սոմարն արժէր 8 ռուբլի, մի քանի սոմար էլ երկրորդ տեսակից, որի սոմարն արժէր 5 ռուբլի։ Բոլոր խառնուրդի մէջ օգուտ ստացան 7 ռուբլի։ Քանի սոմար երկրորդ տեսակից կար խառնուրդի մէջ։

393. Գինեվաճառը 3 վեդրո գինին, որի վեդրոն արժէր 12 ռուբլի, խառնեց երկու վեդրո ուրիշ գինու հետ, որի վեդրոն արժէր 18 ռուբլի։ Բոլոր խառնուրդը ծախելով օգուտ ստացաւ 8 ռուբլի։ Քանիսո՞վ ծախեց նա խառնուրդի մի վեդրոն։

394. Երկու տեսակ թէյ խառնեցին իրար։ Մի տեսակից վերցրին 12 գրուանքայ, որի գրուանքան արժէր 3 ռուբլի և մի քանի գրուանքայ միւս տեսակից, որի գրուանքան արժէր 4 ռուբլի։ Քանի գրուանքայ թէյ խառնեցին լաւ տեսակից, եթէ բոլոր խառնուրդը արժէր 100 ռուբլի։

395. Խանութպանը երկու տեսակ խաղող խառնեց հետ։ Լաւ տեսակից վերցրեց 4 գրուանքայ, որի գրուանքան արժէ 16 կոպ., մի քանի գրուանքայ էլ ուրիշ

տեսակից, որի գրուանքան արժէր 12 կոպէկ։ Բ,
նուրդը ծախեց 95 կոպէկի և մնաս արաւ 5 կո
գրուանքայ վերցրեց նա երկրորդ տեսակից։

---

## XII.

**396.** Խանութում մի աշակերտ 4 տետր
տիտը գնեց 50 կոպէկի մի ուրիշ աշակերտ
4 տետրակը և 3 մատիտը գնեց 29 կոպէ
մի տետրակը և մի մատիտը։

**397.** Դերձակը առաջին անգամ գն
մահուդ և 8 արշին կապոյտ մահուդ և վ
Երկրորդ անգամ միևնոյն գնով գնեց 7
և 8 արշին կապոյտ մահուդ և վճարեց
արժէր մի արշին սև մահուդը և մի
հուդը։

**398.** Կալուածատէրը մի անգամ
կացին և վճարեց 100 րուբլի. մի
գնով գնեց 18 արօր և 19 կացին
Որքա՞ն արժէր մի արօրը և մի կաց

**399.** Մրգավաճառի խանութո
ուանքայ խնձոր և 6 գրուանքայ
պէկ. քոյրը միևնոյն գնով գնեց
6 գրուանքայ տանձ և վճարեց
խնձորի և տանձի մի գրուանք։

**400.** Գիւղացին մի ձիուն
րուբլի։ Միւս գիւղացին մի
89 րուբլի։ Որքան արժէր մի

**401.** Աշակերտը գնեց 7
տրակ և վճարեց 79 կոպ.
գնով գնեց 10 մատիտ և 1
կոպէկ։ Որքան արժէր մի

## XIII.

### ՀԱՄԵՄԱՑՈՒԹԻՒՆ

402. Հացահատիկ վաճառողը առաջին օրը գնեց 10 սոմար գարի, երկրորդ օրը նոյն գնով գնեց 13 սոմար և երկրորդ օրը աւելի վճարեց 24 րուբլի։ Ո՞րքան արժէր գարու ամեն-մի սոմարը։

403. Խանութում միևնոյն գնով երկու կտոր մահուդ ծախեցին. մէկի երկարութիւնն էր 23 արշին, իսկ միւսինը 30 արշին և երկրորդ կտորը առաջինից աւելի արժէր 21 րուբլի։ Որքան արժէր ամեն-մի կտոր մահուդը։

404 Մրգավաճառը մի գնողի ծախեց 78 կոպ. նարինջ, երկրորդին 96 կոպ. Քանի նարինջ գնեց ամեն-մէկը, եթէ երկրորդը առաջինից աւելի գնեց 3 նարինջ։

405. Մի գիւղացի պարտք ունէր։ Նա առաջարկեց իւր պարտատիրոջը մի քանի սոմար գարի, սոմարը 6 րուբլիով և 38 րուբ. էլ փող, կամ նոյնքան սոմար հաճար՝ սոմարը 4 րուբլիով և 52 րուբլի էլ փող։ Որքան էր գիւղացու պարտքը։

406. Մի երեխայ գնեց 4 գրուանքայ շլոր, իսկ միւսը 7 գրուանքայ և երկրորդը առաջինից աւելի վճարեց 18 կոպ. Որքան փող ծախսեց ամեն-մի երեխան։

## XIV.

407. Երբ է սկսւում օրը, շաբաթը և տարին։

408. Ո՞րքան ժամ է անցել առաւօտեան 6 ժամից մինչև 9 ժամը, 12 ժամը, 2 ժամը, 5 ժամը։

409. Ո՞րքան ժամ է անցել առաւօտեան 11 ժամից մինչև կէսօրուայ 3, 4, 6, 8, 11 ժամը։

410. Ո՞ր ժամը կլինի այժմ, եթէ առաւօտեան ժամը 5-ից արդէն անցել է 8, 12, 15 ժամ։

411. Ո՞ր ժամը կլինի այժմ, եթէ երեկոյեան ժամը 7-ից անցել է 6, 9, 12, 8, 13 ժամ։

412. Ո՞րքան ամբողջ օրեր են անցել շաբաթուայ սկզբից մինչև երեքշաբթի, հինգշաբթի շաբաթ օրը։

413. Այժմ ո՞ր օրն է, եթէ շաբաթուայ սկզբից անցել է 3, 5, 6 օր։

414. Ո՞րն է տարուայ երկրորդ, չորրորդ, հինգերորդ, տասներորդ, երրորդ, վեցերորդ ամիսը։

415. Քանի ամիս է անցել տարուայ սկզբից մինչև փետրուար, մայիս, սեպտեմբեր, դեկտեմբեր ամիսը։

416. Այժմ որ ամիսն է, եթէ տարուայ սկզբից անցել է 3, 5, 7, 9, 11 ամիս։

417 Տարուայ որ ամիսները ունի 30 օր և որ ամիսները 31 օր։

418. Այժմ ամսու քանիսն է, եթէ ամսու սկզբից անցել է 8, 15, 27, 16, 20, 25 օր։

419. Քանի ամբողջ օրեր և ամիսներ անցել են տարուայ սկզբից մինչև մարտի 23-ը յունիսի 18-ը, օգոստոսի 16-ը։

420 Քանի ամբողջ ամիսներ և օրեր անցել են տարեուայ սկզբից մինչև այսօր։

421. Այսօր ամսու քանիսն է. ամսու քանիսը կլինի մի շաբաթ յետոյ. ամսու քանիսն էր սրանից երկու շաբաթ առաջ։

422. Այժմ ո՞ր ամիսը և ամսու քանիսն է, եթէ տարուայ սկզբից անցել է 2 ամիս 16 օր, 5 ամիս 24 օր, 9 ամիս 17 օր, 11 ամիս 24 օր։

## XVII.

*Հասարակ կոտորակներ և նրանց գրելը.*

423. Մայրը մի խնձորը երկու հաւասար բաժին արաւ

և մի կտորը տուեց որդուն, միւս կտորը տուեց աղջկան։ Ո՞րքան խնձոր ստացաւ որդին և որքան աղջիկը։

424. Մայրը մի գաթան հաւասար կերպով բաժանեց իւր չորս որդիներին։ Ո՞րքան գաթայ ստացաւ ամեն-մի որդին. (գաթայի որ մասը ստացաւ ամեն-մի որդին).

425. Ուսուցիչը մի թերթ թուղթը հաւասար կերպով բաժանեց 4 աշակերտի։ Թղթի ո՞ր մասը ստացաւ ամեն-մի աշակերտը։

426. Աղջիկը մի խնձորը բաժանեց չորս հաւասար մասերի և նրանց երեք մասը վերցրեց իրան, մի մասը տուեց եղբօրը։ Խնձորի ո՞ր մասը վերցրեց իրան և որ մասը տուեց եղբօրը։

427. Մի գրուանքայ ալիւրից 6 հաւասար բլիթներ թխեցին։ Ո՞րքան ալիւր կը գնայ 1, 2, 3, 4, 5, բլիթի համար։

428. Տասն հաւասար մեծութեան կարկանդակը քաշում է մի գրուանքայ։ Ո՞րքան է քաշում 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9 կարկանդակը։

429. Մի սաժէնն ունի 3 արշին. մի արշինը սաժէնի ո՞ր մասն է, 2 արշինը որ մասն է։

430. Մի արշինը ունի 16 վերշոկ։ Չորս վերշոկը արշինի ո՛ր մասն է կազմում։

431. Գրել կէս, մի երրորդական, մի չորրորդական, մի հինգերորդական, մի իններորդական։

432. Գրել երկու-երրորդական, երեք չորրորդական, եօթըն ութերորդական, հինգ-իններորդական։

433. Չորս մարդ միասին մի գրուանքայ թէյ գնեցին և հաւասար կերպով բաժանեցին իրանց մէջ։ Ամեն-մէկը թէյի ո՞ր մասը ստացաւ։

434. Երկու հացը քաշում է 5 գրուանքայ, որքան է քաշում ամեն մի հացը։

435. Եօթն արշին չթից 3 միատեսակ շապիկներ կարեցին։ Որքան չիթ գնաց ամեն-մի շապիկի համար։

437. Ո՞րքան կէս մասեր ունի մի ամբողջ խնձորը։

438. Ո՞րքան վեցերորդական մասեր ունի մի ամբողջ արշինը։

439. Ո՞րքան ութերորդական մասեր ունի մի միաւորը։

440. Ո՞րքան հինգերորդական մասեր ունի 2, 3, 4, 5, 10 միաւորը։

441. Մայրը ութն երեխաներից ամեն-մէկին տուեց կէս-կէս խնձոր։ Ընդամենը քանի խնձոր բաժանեց նա։

442. Գիշերօթիկ դպրոցում ամեն-մի աշակերտին կերակրի մէջ տալիս են մի չորրորդական գրուանքայ միս։ Ո՞րքան միս կտան 36 աշակերտին։

443. Մի զինուորին օրական տալիս են կէս գրուանքայ միս։ Ո՞րքան միս կտան 15 զինուորին։

---

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՆԴԻՐՆԵՐ.

444. Գիւղացին 4 սոմար գարի ցանեց և բերքը ստացաւ մէկին 6։ Ստացած գարու երրորդ մասը պահեց ձիերի համար մնացածի մի չորրորդ մասը պահեց սերմացուի համար, իսկ մնացածը ծախեց, ամեն-մի սոմարը 8 րուբլիով։ Ո՞րքան փող ստացաւ։

445. Ատաղձագործը 16 հատ տախտակ գնեց, ամեն 4 տախտակին վճարեց 13 րուբլի։ Այդ տախտակներից նա շինեց 2 պահարան և 8 նստարան։ Ամեն մի պահարանը ծախեց 27 րուբլու, իսկ ամեն-մի նստարանը 3 րուբլու։ Ո՞րքան փող մնաց իրան աշխատանքի վարձ։

446. Մի մարդ դուրս եկաւ փոստի կայարանից առաւօտեան ժամը 7-ին և ամեն-մի ժամում գնում էր 8 վերստ։ Ո՞ր ժամին կհասնի քաղաք, եթէ բոլոր ճանապարհի երկարութիւնն է 56 վերստ և եթէ հանգստանալու համար գործ է դնում 3 ժամ։

447. Պարտէզում 65 վարդենու-թուփ կայ։ Նրանցից

կարմիր վարդի թփերը չորս անգամ շատ են սպիտակ վարդի թփերից։ Ո՞րքան կարմիր վարդենիներ և որքան սպիտակ վարդենիներ կան մեր պարտիզում։

448. Անասնավաճառը երեք ոչխարը առնում է 12 րուբլու, իսկ ինքը ամեն 5 ոչխարը ծախում է 25 րուբլու։ Ո՞րքան օգուտ է ստանում 46 ոչխարից։

449. Հայրը մեծ որդուն տուեց 35 շլոր, իսկ միջնակին՝ 31 շլոր և պատուիրեց բաժանել փոքր եղբօր հետ այնպէս, որ բոլորի ունեցածն էլ լինի հաւասար։ Մեծ եղբայրներից ամեն-մէկը ո՞րքան շլոր պիտի տայ փոքր եղբօրը։

450. Դերձակը ծախեց մի վերարկու, մի բաճկոն և մի սերտուկ, բոլորը 64 րուբլու։ Վերարկուն 2 անգամ թանկ արժէր սերտուկից, իսկ սերտուկը 5 անգամ թանկ էր բաճկոնից։ Ի՞նչ արժէր նրանից իւրաքանչիւրը առանձին։

451. Գինեվաճառը սպիրտից և ջրից խառնուրդ կազմեց, սպիրտ վերցրեց 42 վեդրօ, իսկ ջուր, նրանից 14 անգամ պակաս։ Քանի՞ վեդրօ ստացուեցաւ բոլոր խառնուրդը։

452. Վաճառականը սուրճի ամեն-6 փութը առնում է 48 րուբլու, իսկ ինքը ամեն փութը ծախում է 10 րուբլու։ Քանի փութ սուրճ պիտի ծախէ, որ օգուտ անէ 52 րուբլի։

453. Գիւղացին ոտքով ճանապարհ ընկաւ դէպի քաղաք առաւօտեան 5 ժամին և ամեն-մի ժամում գնում է 3 վերստ։ Եօթն ժամից յետոյ նրան հասաւ մի սայլապան և նստեցրեց սայլին։ Գիւղացին սայլով գնաց 6 ժամ, ամեն-մի ժամում 9 վերստ։ Օրուայ ո՞ր ժամին նա հասաւ քաղաք և ո՞րքան էր քաղաքի հեռաւորութիւնը գիւղից։

454. Երեք գրագիր արտագրութեան համար ստացան 62 րուբլի։ Առաջինը աշխատել էր 10 օր, երկրորդը՝ 3 օրով պակաս, իսկ երրորդը՝ 2 անգամ երկրորդից աւելի։

Ո՞րքան փող պիտի ստանայ ամեն-մէկը իւր աշխատանքի համար։

455. Խանութում 60 արշին չիթ կար։ Մէկ գնողի ծախեցին նրա կէսը, միւսին մնացածի երրորդ մասը։ Առաջինից 4 ռուբլի աւելի փող ստացան, քան երկրորդից։ Ո՞րքան արժէր չթի ամեն-մի արշինը։

456. Մի հօտի մէջ 70 գլուխ անասուն կար։ Կովերը 4 անգամ և էլի 10 հատով աւելի էին ոչխարներից։ Քանի կով և քանի ոչխար կար այդ հօտի մէջ։

457. Շունը հալածում էր աղուէսին։ Նրանք իրարից հեռու էին 76 սաժեն։ Շունը ամեն մի վայրկեանում վազում էր 5 սաժեն, իսկ աղուէսը՝ 3 սաժեն։ Քանի վայրկեանից յետոյ շունը կը հասնէր աղուէսին։

458. Գիւղացին քաղաք տարաւ ծախելու 8 տասնեակ ձու։ Ճանապարհին կողովը վայր ընկաւ և 25 ձու կոտրուեցաւ, մնացածի՝ ամեն 5 հատը ծախեց 4 կոպէկի։ Ո՞րքան փող ստացաւ նա և որքան վնաս ունեցաւ կոտրուած ձուերի համար։

459. Գործարանում աշխատում են 25 տղամարդ և 18 կին։ Բոլորն էլ ստանում են հաւասար չափով ռոճիկ։ Մի շաբաթ անցնելուց յետոյ երևաց, որ տղամարդիկ կանանցից 21 ռուբլի աւել են ստացել։ Ի՞նչ էր ստանում շաբաթական մի տղամարդը և մի կինը։

460. Երկու տեսակ գինուց խառնուրդ կազմեցին։ Մի տեսակից վերցրին 2 շիշ, որի շիշն արժէր 8 ռուբլի, միւս տեսակից՝ 8 շիշ։ Բոլոր խառնուրդը ծախեցին 56 ռուբլու և օգուտ արին 8 ռուբլի։ Ո՞րքան արժէր երկրորդ տեսակ գինու ամեն-մի շիշը։

461. Մրգավաճառը ծախեց 5 լիմոն և 9 նարինջ։ Ծախած լիմոնները կազմում են իւր ունեցածի ութներորդ մասը, իսկ նարինջները—հինգերորդ մասը։ Քանի լիմոն և քանի նարինջ ունէր նա։

462. Առաւօտեան ժամը 8-ին քաղաքից դուրս եկաւ

մի գիւղացի և ամեն-մի ժամում գնում է 4 վերստ։ Նոյն օրուայ երեկոյեան ժամը 5-ին նոյն քաղաքից դուրս եկաւ մի կարաւան և ամեն-մի ժամում գնում էր 10 վերստ։ Քանի ժամից յետոյ և ժամը քանիսին կարաւանը կը հասնի գիւղացուն։

**463.** Վեց արշին չիթը արժէ 78 կոպ. իսկ 4 արշին քաթանը՝ 76 կոպէկ։ Ո՞րքան արժէ 5 արշին չիթը և 2 արշին քաթանը։

**464.** Աշախինը 89 կոպէկ փող ունէր։ Այդ փողերովն նա գնեց իւղ, բրինձ և աղ։ Բրինձը 19 կոպէկ աւելի արժէր աղից, իսկ իւղը՝ 8 անգամ աւելի արժէր, քան բրինձը։ Իմանալ նրանցից ամեն մէկի գինը։

**465.** Ծառան ամսական ստանում էր 7 րուբլի։ Մի տարի և երկու ամիս ծառայելուց յետոյ հաշիւը վերջացրեց և դուրս եկաւ։ Նա ստացաւ 45 րուբլի փող, մի ձի և մի կով։ Ո՞րքան արժէր կովը և ձին առանձին—առանձին, եթէ ձին կովից աւելի արժէր 15 րուբլիով։

**466.** 16 բանւորը 3 օրում ուտում են 96 գրուանքայ հաց։ Ո՞րքան հաց կուտեն 14 բանւորը 2 օրում։

**467.** Ութ գրագիր մի գործ վերջացնում են 10 օրում։ Քանի օրում նոյն գործը կը վերջացնեն 5 գրագիրը։

**468.** Երեք ատաղձագործ սեղաններ նորոգելու համար ստացան 54 րուբլի։ Այդ փողից որքան բաժին պիտի հասնի ամեն մէկին, եթէ որ մէկը նորոգեց 6 սեղան, երկրորդը՝ 8 սեղան և երրորդը՝ 13 սեղան։

**469.** Երեք աշակերտ միասին 4 դիւժին գրչածայր գնեցին։ Մէկը տուեց 7 կոպ. միւսը՝ 8 կոպ. և երրորդը՝ 9 կոպ.։ Ո՞րքան գրչածայր պիտի ստանայ ամեն-մի աշակերտը։

**470.** Խանութպանը իւր պարտքը վճարելու համար առաջարկում է մի կտոր մահուդ, որի արշինը արժէ 4 րուբլի և 46 րուբլի փող, կամ նոյնքան արշին մախմուր, որի

արշինն արժէ 9 րուբլի և 6 րուբլի էլ փող։ Ո՞րքան էր խանութպանի պարտքը։

471. Մի խանութում վաճառեցին 18 արշին բրդէ կտոր և 7 արշին մետաքսէ կտոր և ստացան, 64 րուբլի։ Երկրորդ անգամ նոյն գներով ծախեցին 18 արշին բրդէ կտոր և 15 արշին մետաքսէ կտոր և ստացան 96 րուբլի։ Ինչ արժէր բրդէ և մետաքսէ կտորի ամեն-մի արշինը։

472. Դպրոցի երեք դասարանում 92 աշակերտ կայ։ Առաջինում երկրորդից աւելի են 15 հոգի, իսկ երկրորդում երրորդից աւելի են երեք անգամ։ Ո՞րքան աշակերտ կայ ամեն մի դասարանում։

473. Գիւղացին դուրս եկաւ տանից դէպի քաղաք առաւօտեան ժամը 5-ին և ամեն-մի ժամում գնում է 4 վերստ. ժամը 10—12 նա հանգստացաւ, յետոյ շարունակեց ճանապարհը և ամեն-մի ժամում գնում էր 3 վերստ։ Քաղաք հասաւ նոյն օրուայ ժամը 4-ին։ Ո՞րքան էր գիւղի հեռաւորութիւնը քաղաքից։

474. Խանութպանը երկու տեսակ ընկուզ խառնեց իրար։ Մի տեսակի գրւանքան արժէր 10 կոպ. միւս տեսակինը՝ 16 կոպ. բոլոր խառնուրդը դուրս եկաւ 24 գրւանքայ և խառնուրդի ամեն-մի գրւանքան ծախելով 12 կոպէկի, ո՛չ օգուտ արաւ, ո՛չ վնաս։ Ո՞րքան ընկուզ նա խառնեց ամեն-մի տեսակից։

475. Մի կտոր մահուդ, որի երկարութիւնն էր 58 արշին, արժէր 65 րուբլի։ Այդ մահուդից առաջին անգամ ծախեցին 24 արշին, ամեն 3 արշինը 5 րուբլու։ Երկրորդ անգամ ծախեցին 32 արշին, ամեն 8 արշինը 9 րուբլու։ Իսկ մնացածի արշինը ծախեցին 3 րուբլու։ Ո՞րքան օգուտ ստացան։

476. Մանրավաճառը ամեն 5 վարունգը առնում է 6 կոպէկի, իսկ ինքը ամեն 12 հատը ծախում է 18 կոպէկի։ Որքան օգուտ կ՚ստանայ նա, եթէ ծախի 60 վարունգ։

477. Ձութավաճառը մի գնողի ծախեց 96 կոպէկի

չիթ, իսկ միւսին՝ 36 կոպէկի։ Ո՞րքան արժէր չթի մի արշինը և որքան չիթ գնեց ամեն-մէկը, եթէ որ առաջինը երկրորդից աւելի գնեց 5 արշին։

478 Երեխան երկու գրպանում մի րուբլու մանր փող ունէր։ Երբ երկու գրպանից էլ հաւասար կերպով ծախսեց, այն ժամանակ մէկում մնաց 38 կոպէկ. միւսում՝ 36 կոպէկ։ Որքան փող դրեց նա ամեն-մի գրպանը։

479 Երկու մրգավաճառ ապրանք են փոխանակում։ Մէկը առաջարկում է միւսին 18 խնձոր, որ տասնեակը արժէ 40 կոպ. իսկ միւսը առաջարկում է մի քանի լիմոն, որի հատն արժէ 6 կոպէկ։ Քանի լիմոն երկրորդը պէտք է տայ առաջինին։

480. Երկրագործը իւր արտերից ստացաւ 60 սոմար գարի։ Նրա հինգերորդ մասը նա պահեց ձիերի համար, մնացածի երրորդ մասը նա ծախեց, կրկին մնացածի կէսը փոխեց խոտի հետ, իսկ ինչ որ մնաց, այնէլ հետեւեալ տարին ցանեց և բերքը ստացաւ մէկին չորս։ Որքան գարի ժողովեց նա երկրորդ տարին։

481. Երկու գիւղացի սալլով ապրանք տեղափոխեցին և ստացան 28 րուբլի։ Նրանցից մէկը տեղափոխեց 57 փութ, իսկ միւսը 27 փութ։ Որքան փող ստացաւ ամեն-մէկը։

482. Եթէ գարու սոմարը ծախուի 8 րուբլու, այն ժամանակ օգուտ կը լինի 18 րուբլի, իսկ եթէ ծախուի 5 րուբլու, այն ժամանակ վնաս կը լինի 9 րուբլի։ Իմանալ քանի սոմար գարի կայ։

483. Վաճառականը երեք տեսակ թէյ խառնեց իրար. Մի տեսակից վերցրեց 4 գրուանքայ, որի գրուանքան արժէր 2 րուբլի։ Միւս տեսակից 7 գրուանքայ, որի գրուանքան արժէր 3 րուբլի և երրորդ տեսակից 8 գրուանքայ, որի գրուանքան արժէ 5 րուբլի։ Քանիսով պիտի ծախէ խառնուրդի գրուանքան, որ օգուտ անէ 7 րուբլի։

484. Գիւղացին դուրս եկաւ գիւղից և գնում է դէ-

պի քաղաք. ամեն մի ժամում նա գնում է 8 վերստ։ Վեց ժամից յետոյ նոյն գիւղից դուրս եկաւ մի ուրիշ գիւղացի և ամեն-մի ժամում գնում է 11 վերստ։ Քանի ժամից յետոյ երկրորդ գիւղացին կը հասնի առաջինին։

485. Խանութպանը մի կտոր չիթ ունէր։ Եթէ նրա արշինը ծախէր 14 կոպէկի, այն ժամանակ վնաս կանէր 60 կոպ. իսկ եթէ մի արշինը ծախէր 19 կոպէկի, այն ժամանակ օգուտ կանէր 40 կոպէկ։ Իմանալ քանի արշին էր չթի կտորը։

486. Երեք արշին սև մահուդը և 4 արշին կապոյտ մահուդը արժէ 45 րուբլի։ Որքան արժէ ամեն-մէկի արշինը, եթէ կապոյտ մահուդի մի արշինը 3 անգամ թանկ արժէ սևից.

487. Խանութում 3 արշին քաթանը և 10 արշին ժապաւէնը ծախեցին 67 կոպէկի։ Ուրիշ անգամ նոյն գնով 3 արշին քաթանը և 4 արշին ժապաւէնը ծախեցին 43 կոպէկի։ Որքան արժէր մի արշին քաթանը և որքան արժէր մի արշին ժապաւէնը։

488. Գեղջկուհին երեք կողով ձու բերեց քաղաք ծախելու։ Առաջին երկու կողովի մէջ կային երկու-երկու դիւժին, իսկ երրորդի մէջ երեք և կէս դիւժին։ Որքան փող ստացաւ նա, եթէ ամեն-մի տասնեակը ծախեց 9 կոպէկի։

489. Բանւորներին 13 օր կերակրելու համար հարկաւոր է 91 գրուանքայ միս։ Քանի օր կը բաւականանայ նոյն բանւորներին 77 գրուանքայ միսը։

490. Ես մտքումս մի թիւ եմ պահել։ Եթէ այդ թիւը բազմապատկեմ 5 անգամ և ստացածի վրայ աւելացնեմ 15, կըլինի 80։ Որն է մտքումս պահած թիւը։

491. Ես մտքումս մի թիւ եմ պահել. եթէ այդ թիւը բաժանեմ 9 վրայ և ստացածին աւելացնեմ 17, կ՚ստանամ 23։ Որն է այդ թիւը։

492. Եղբայրը 3 անգամ աւելի ընկոյզ ունէր, քան

քոլըը։ Բայց երբ քըոջը տուեց 18 ընկուզ, այն ժամանակ իւր մօտ մնաց 54 հատ։ Քանի ընկուզ ունէր քոյըը։

493. Դերձակը 29 արշին մահուդ գնեց։ Նա վճարեց իւր մօտ եղած բոլոր փողը և էլի պարտ մնաց 25 րուբլի որքան փող ունէր դերձակը, եթէ մահուդի մի արշինը արժէր 3 րուբլի։

494. Գինեվաճառը 42 շիշ գինուն վճարեց 84 րուբլի։ Նրանցից 14 շիշը կարմիր էր. իսկ մնացածը սպիտակ։ որքան արժէր կարմիր գինու ամեն-մի շիշը եթէ սպիտակ գինու մի շիշը երկու անգամ թանկ արժէր։

495. 12 որմնադիրներ 16 օրում մի այգու շուրջը մի պատ քաշեցին, որի երկարութիւնն էր 96 սաժ. Ինչ երկարութեան պատ կարող են շինել 6 որմնադիրը 2 օրում։

496. Հինգ լապտերի մէջ 6 շաբաթում վառւում է 90 գրուանքայ նաւթ։ Որքան նաւթ կը վառուի 8 լապտերի մէջ 4 շաբաթում։

497. Խանութպանը երկու տեսակ բրինձ խառնեց իրար։ Մի տեսակից վերցրեց 5 գրուանքայ, որի գրուանքան արժէր 9 կոպէկ, մի քանի գրուանքայ էլ երկրորդ տեսակից, որի գրուանքան արժէր 7 կոպէկ։ Բոլոր խառնուրդը ծախեց 52 կոպէկի և վնաս արաւ 14 կոպէկ։ Քանի գրուանքայ բրինձ խառնեց նա երկրորդ տեսակից։

498. Երկուշաբթի երեկոյեան ժամը 9-ին երկու ճանապարհորդ դուրս եկան երկու զանազան քաղաքներից և գնում են իրար հանդէպ։ Նրանցից մէկը գնում է մի ժամում 8 վերստ, իսկ միւսը—6 վերստ։ Նրանք երբ կը հանդիպին իրար, եթէ իրարից հեռու են 98 վերստ։

499. Խանութպանը աղի փութն առնում է 60 կոպ. իսկ ինքը ամեն-մի գրուանքան ծախում է 2 կոպէկի Քանի փութ աղ պէտի ծախէ որ օգուտ անէ 1 րուբլի։

## ԹՈՒՂԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ.

### Գ Ո Ւ Մ Ա Ր Ե Լ.

| 1. | 2. | 3. | 4. |
|---|---|---|---|
| 10+2= | 4+30= | 30+17= | 40+33= |
| 20+7= | 6+10= | 60+32= | 20+55= |
| 40+8= | 2+40= | 80+15= | 70+23= |
| 50+4= | 7+60= | 70+18= | 10+64= |
| 90+6= | 3+80= | 60+36= | 30+45= |
| 30+9= | 9+50= | 40+13= | 10+78= |
| 70+5= | 2+80= | 50+29= | 20+37= |
| 20+4= | 3+70= | 30+58= | 30+33= |
| 60+3= | 9+60= | 10+36= | 50+48= |

| 5 | 6. | 7. | 8. |
|---|---|---|---|
| 15+10= | 22+20= | 32+7= | 6+23= |
| 24+30= | 44+50= | 64+3= | 3+45= |
| 18+60= | 26+30= | 66+2= | 2+83= |
| 24+70= | 35+30= | 84+3= | 6+72= |
| 32+40= | 28+60= | 31+7= | 5+54= |
| 45+20= | 17+50= | 73+5= | 4+32= |
| 34+30= | 24+60= | 64+4= | 7+51= |
| 32+40= | 38+30= | 22+7= | 4+62= |
| 52+20= | 41+40= | 65+4= | 5+23= |

| 9. | 10. | 11. | 12. |
|---|---|---|---|
| 42+8= | 14+45= | 15+6= | 16+16= |
| 34+6= | 34+23= | 18+3= | 35+28= |
| 73+7= | 62+27= | 38+6= | 18+46= |
| 25+5= | 23+16= | 29+9= | 39+25= |
| 28+2= | 25+42= | 43+9= | 45+39= |
| 63+7= | 63+15= | 66+6= | 26+65= |
| 72+8= | 44+36= | 87+8= | 15+18= |
| 44+6= | 17+72= | 55+7= | 47+17= |
| 86+4= | 25+44= | 44+8= | 25+68= |

## ՀԱՆԵԼ.

| 1. | 2. | 3. | 4. |
|---|---|---|---|
| 30—6= | 50—4= | 26—6= | 65—5= |
| 40—3= | 30—7= | 28—8= | 73—3= |
| 70—8= | 60—8= | 35—5= | 84—4= |
| 54—4= | 40—5= | 44—4= | 46—6= |
| 30—5= | 20—9= | 78—8= | 37—7= |
| 80—7= | 70—7= | 56—6= | 95—5= |
| 50—5= | 80—3= | 27—7= | 78—8= |
| 60—9= | 40—8= | 48—8= | 41—1= |
| 20—7= | 90—9= | 39—9= | 53—3= |

| 5. | 6. | 7. | 8. |
|---|---|---|---|
| 24—2= | 27—4= | 45—30= | 34—24= |
| 45—3= | 55—3= | 68—50= | 86—56= |
| 58—4= | 36—8= | 73—40= | 77—27= |
| 66—5= | 45—9= | 28—10= | 65—45= |
| 89—7= | 67—8= | 49—30= | 79—39= |
| 38—5= | 76—8= | 65—20= | 46—26= |
| 99—4= | 45—6= | 70—50= | 89—29= |
| 27—3= | 84—7= | 34—10= | 66—46= |
| 48—7= | 28—5= | 71—40= | 34—14= |

| 9. | 10. | 11. | 12. |
|---|---|---|---|
| 30—13= | 65—23= | 32—14= | 64—28= |
| 60—27= | 48—16= | 63—25= | 35—16= |
| 80—16= | 57—25= | 75—48= | 84—38= |
| 70—43= | 66—22= | 81—29= | 43—25= |
| 40—15= | 78—34= | 65—58= | 72—48= |
| 50—25= | 85—21= | 96—48= | 63—26= |
| 30—18= | 96—33= | 84—26= | 91—54= |
| 50—36= | 87—42= | 32—15= | 55—39= |
| 80—35= | 94—13= | 45—27= | 71—24= |

## ԳՈՒՄԱՐԵԼ ԵՒ ՀԱՆԵԼ.

| | |
|---|---|
| **1.** 24+12—18+ 4= | **2.** 43+35—28+10= |
| 35+17—26—15= | 86—29—17+25= |
| 68—25+17—40= | 36+38—18+14= |
| 44—28+36—25= | 75+25—63—22= |
| 76+14—38+29= | 48+34+18—55= |
| 37+47—46—20= | 27+18—30+41= |
| 55+39—48+16= | 93—47+14—35= |
| 27+58—35+21= | 63—18+27—46= |

## ԲԱԶՄԱՊԱՏԿԵԼ.

| | | | |
|---|---|---|---|
| **1.** 2×10= | **2.** 10× 2= | **3.** 6×13= | **4.** 13×3= |
| 3×10= | 10× 3= | 2×35= | 15×4= |
| 4×10= | 10× 4= | 4×24= | 24×2= |
| 5×10= | 10× 5= | 4×17= | 37×2= |
| 6×10= | 10× 6= | 5×15= | 17×4= |
| 7×10= | 10× 7= | 2×21= | 15×6= |
| 8×10= | 10× 8= | 3×16= | 19×5= |
| 9×10= | 10× 9= | 8×11= | 25×3= |
| 10×10= | 10×10= | 6×12= | 14×7= |

## ԲԱԺԱՆԵԼ.

| | | | |
|---|---|---|---|
| **1.** 24 : 3= | **2.** 64 : 4= | **3.** 24 : 12= | **4.** 85 : 17= |
| 36 : 2 | 56 : 4 | 56 : 14 | 36 : 18 |
| 28 : 2 | 48 : 3 | 48 : 16 | 95 : 19 |
| 32 : 4 | 72 : 6 | 65 : 13 | 63 : 21 |
| 45 : 5 | 84 : 4 | 36 : 12 | 96 : 24 |
| 36 : 6 | 78 : 3 | 45 : 15 | 54 : 18 |
| 42 : 7 | 65 : 5 | 78 : 16 | 64 : 16 |
| 56 : 8 | 75 : 3 | 44 : 11 | 51 : 17 |
| 48 : 6 | 96 : 6 | 57 : 19 | 84 : 12 |

## ԲԱԶՄԱՊԱՏԿԵԼ ԵՒ ԲԱԺԱՆԵԼ.

| | | |
|---|---|---|
| **1.** 45 : 3×2= | **2.** 85 : 17×12= | **3.** 44 : 2× 4 : 8= |
| 64 : 8×6 | 36 : 12×24 | 21× 3 : 7× 3 |
| 72 : 9×4 | 35 : 5×12 | 16× 5 : 8× 6 |
| 36 : 3×5 | 14× 6 : 7 | 33× 2 : 6× 8 |
| 42 : 7×9 | 21× 3 : 9 | 77 : 11×12 : 2 |
| 5×18 : 8 | 45× 2 : 6 | 80 : 16×15 : 3 |
| 8× 8 : 4 | 48 : 16×23 | 30 : 3× 6 : 12 |
| 6×16 : 4 | 65 : 13×16 | 56 : 8× 6× 2 |
| 7×12 : 6 | 39 : 13×24 | 78 : 13× 9 : 6 |

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՆԴԻՐՆԵՐ

**1.** ( 48 : 16)+(14× 6)−( 84 : 7)=
( 70 : 5)+(70 : 14)+( 96 : 16)
( 44× 2)−(64 : 4)+( 60 : 15)
( 87 : 3)+(68 : 4)−( 18× 2)
( 76 : 4)+( 2×39)−( 17× 4)
( 42 : 3)+( 5×13)−( 76 : 19)
( 75 : 3)+( 5×15)−( 4×24)
(100 : 4)−(92 : 23)+( 6×12)
( 54 : 3)+(28× 2)−( 4×15)
( 70 : 2)+(65 : 13)−( 87 : 29)
( 2×45)−(26× 3)+( 64 : 16)
( 35× 2)+(68 : 17)−( 57 : 3)
( 28× 3)+(70 : 35)−( 96 : 2)
( 78 : 2)+(66 : 3)−( 57 : 19)
( 32× 2)−(54 : 2)+(100 : 25)
( 2×47)+(81 : 27)−( 46× 2)
( 7×14)−(74 : 2)+( 72 : 18)
( 49× 2)−(65 : 5)+( 96 : 24)
( 56 : 2)+(72 : 4)+( 78 : 26)
( 92 : 4)+( 4×18)−(16× 5)

# ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

246. 8 կոպ.
247. 19 րուբլի.
248. 4 գրուանքայ
249. 87 ընկուզ.
250. 86 կոպ.
251. 7 վերստ.
252. 12 խուրձ.
253. 4 կոպէկ.
254. 22 և 39 լոր
255. 34 և 4 ձուկ.
256. 54 և 5 կոպ.
257. 12 րուբլի.
258. 74 խնձոր.
259. 9 գլուխ.
260. 6 կոպ.
261. 75 կոպ.
262. 63 գր.
263. 12 արշին.
264. 42 և 30 կոպ.
265. 20, 25 և 30 կ
266. 31 և 45 աշ.
267. 27 արշ.
268. 14 և 21 գր.
269. 72 և 8.
270. 85 սաժ.
271. 4 օրից յետոյ
272. 23 փութ.
273. 46, 22 և 27.
274. 29 րուբլի.
275. 72 կոպ.
276. 7 գրչած.
277. 72 թուչ.
278. 26 վեդ.
279. 11 կոպ.
280. 39 օր.
281. 5 րուբլի.
282. 29, 29 և 25 կ
283. 10 և 5 գր.
284. 28, 21, 42 ր.
285. 9 սաժ.
286. 16 շապիկ.
287. 7 տարեկան.
288. 63 փութ.
289. 11 երեխայ.
290. 17 և 34.
291. 9 արշին.
292. 21 գլուխ.
293. 2 տարեկան.
294. 48 կոպէկ.
295. 88 րուբլի.
297. 75 րուբլի
299. 64, 76, 56, 60.
300. 42, 54, 72 84
301. 42, 30, 60.
302. 21 գրուան.
303. 60 րուբլի.
304. 72 գր.
305. 80 գր.
306. 27 փութ.
307. 3 ժամ.
308. 65 րուբլի.
309. 23 և 14 ար.
310. 60 և 35 փ.
311. 19, 14, 14.
312. 45 և 30 կ.
313. 35 և 20
314. 43 և 24.
315. 28 և 31.
316. 15, 24, 31.
317. 16, 12, 17.
318. 28, 43.
319. 7 րուբլի.
320. 72 կոպ.
321. 35 արշ.
322. 24 ոչխար
323. 36 կոպ.
324. 22 րուբլի
325. 46 կաթսայ
326. 2 կոպ.
327. 48, 42
328. 6, 10 արշ.

329 35, 21, 42
330 57, 42 ռուբ.
331. 21, 24, 12
332. 24, 12, 16, 20
333. 24, 30, 39
334. 3, 6 փութ
335. 24, 42 կոպ
336. 5, 10
337 13, 39 խնձոր
338. 16. 48 ռուբ.
339 29 և 63
340. 10, 40, 40
341. 16, 32, 48
342. 36, 18, 18
343. 6, 30. 60 տար
344. 42 ռուբլի
345. 23 և 46
346. 12, 24, 36
347. 13, 26 վեդ.
348. 13 վեր. 5 ժ.
349. 6 օրից
350. 3 ժամից
351. 5 ժամից
352. 5 վերստ
353. 3 ժամից
354. 14 ժամից
355. 10 քայլ.
356. 52 վերստ.
357. երեկ. 10 ժ.
358. 90 վեր.
359. 3 ժամ
360 6 ժամ
361. 15 լիմոն
362 24 կոպ.
363. 36 տանձ
364. 2 շորդ
365. 12 խնձոր
366. 22 արշին
367. 36 կոպ.
368. 20 գրուանքայ
369. 46 և 41 կոպ.
370. 27 և 22 խնձ
371 45 և 31 աշ.
372. 39 և 32
373. 42 և 39 փութ
374. 40 և 20
375 21 և 11
376. 43 և 40 սաժ
377. 43 և 50 փութ
378. 56 ռուբլի
379 50 բաժէ
380 80 գրուանքայ
381. 10 կաթսայ
382. 15 նարինջ
383. 96 կոպ.
384 12 և 24 գր.
385. 19 ռուբլի
386. 6 կոպէկի
387. 43 կոպ.
388. 29 կոպ
389. 15 կոպ.
390 8 կոպ.
391. 3 գրուանք.
392. 6 սամար
393. 16 ռուբլի
394 16 գր.
395. 2 գրուանք.
396 3 կ. մատ.
397. 2 ռուբլի
398. ր. տրոլը
399. 5կ. խնձ
400. 3 . ոչխ.
401 5 կ մատ.
402. 8 ռուբլի
403. 69 և 0 ր.
404 13 և 16 նար.
405. 80 ռուբլի
406. 24 և 42 գր.
444. 96 ռուբլի
445 26 ռուբլի
446 երեկ. ժ 5.
447. 13 և 52
448. 46 ռուբլի
449. 13 և 9
450. 4, 20, 40, ր.
451. 45 վեդրո
452. 26 փութ.

453 երեկ. ժ. 6-ին
454. 20, 14, 28 ր
455. 20 կոպ.
456. 58 և 12
457. 38 վայրկ.
458 44 կոպէկ
459 3 րուբլի
460. 4 րուբլի
461. 40 լիմ 45 որ
462. 6 ժամից
463. 65 կ. 3 կ.
464. 7, 26, 6 կոպ
465. 19 և 34
466. 56 ր.
467. 16 օր.
468. 1, 16, 26 ր.
469. ..16, 18 ծայր
470. 8 րուբլի
471. 4 և 2 րուբլի
472. 48, 33, 11
473. 32 վերստ
474. 8 և 14 գր.
475. 17 րուբլի
476. 18 կոպ.
477. 12 կոպ.
478. 51 և 49 կոպ.
479. 12 լիմոն
480. 64 սոմար
481. 19 և 9 րուբլի
482. 9 սոմար
483. 4 րուբլի
484. 16 ժամ.
485. 20 արշին
486. 3 ր. սև մալ.
487. ժամ. 4 կ.
488. 81 կոպ.
489. 11 օր
490. 13
491. 54
492. 24 ընկուզ
493. 62 րուբլի
494. 2 րուբլի
495. 6 սաժ.
496. 96 գր.
497. 3 գլուանք.
498. ժամը 4-ին
499. 5 փութ.

---

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220025221

## ~~ԻՄ~~ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Թուաբանական խնդիրներ և օրինակներ I մաս. բ. տպագրութիւն . . . Գին է 25 կ.
2. Թուաբանական խնդիրներ և օրինակներ. II մաս. գ. տպ. . . . Գին է 25 կ.
3. Թուաբ. խնդիր. և օրինակներ, III մաս. Գին է 25 կ.

…որ պահեստը Տփխիսում Ռոստոմբեկով գրախա-
…խանութում (Штабная и Пушкинская)
… նոյնպէս Տփխիսի և գաւառական քաղաք-
…ի բոլոր գրավաճառների մօտ։

ԳԱՏՈՒԻԷՐՆԵՐԸ

ԳԻՈՒՄ ԵՆՃԻՑՏ ԵՒ ԱՐԸԳ

---

Առանձին պատուէրներով
Карсъ, учителю реальнаго … ища
*А. Порсугянъ*